№ 178 ՀԻՆԳՇԱԲԹԻ 14 ՕԳՈՍՏՈՍԻ
1914
ՀԻՆԳՇԱԲԹԻ 14 ՕԳՈՍՏՈՍԻ № 178
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի, ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրէժինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Պետական պրօգիմնազիաների իրաւունքներով։ Տղաների եւ աղջիկների միատեղ ուսուցում։

Բացվում է IV դասարան։ Վերաքննութիւնները՝ օգոստոսի 30-ին և սեպտ. 1-ին, ընդունելութեան քննութիւնները՝ սեպտեմբերի 2-ին, 3-ին և 4-ին, մաղթանքը՝ 5-ին, ուսման սկիզբը՝ 6-ին։ Սերգիեվսկայա փ. ս. տ. № 20։
տռ. (19,26,30,2) 765. 5—1

ԳԻՄՆԱԶԻԱ Վ. Ա. ԼԵՎԱՆԴՕՎՍԿԻԻ

Պետական գիմնազիաների իրաւունքներով, երկսեռ աշակերտների համար։
Գունիբսկայա, 10, սեփ. տուն, տելեֆ. 754

Ընդունելութեան քննութիւնները սեպտեմ. 1-ին և 2-ին
Վերաքննութիւնները » 3-ին
Մաղթանք » 5-ին
առաւ. ժ. 9-ին

Գիմնազիայի գրասենեակը բաց է օգոստ. 16-ից առաւ. ժամը 11-ից մինչև ցեր. ժ. 2-ը։
(Գ.Կ.) տռ. 744. 10—6

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ

Արժանացած մեծ պարգևի։ Վաճառվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում։
Ֆաբրիկային իսկական գներով։
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ոճի, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ։ Բացառապէս լրիւ չափն է 11¼ արշ. երկար.։
Սէզօնային նմուշները ուղարկվում են ՁՐԻ և օտար քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(Գ. Հ.) տռ. 309. 50—35

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչևսկայա 13, տելէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելօվզորով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Ալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ճ. Ր. Ֆիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
(Գ. Կ.) տռ 368. 100—78

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրոֆ. Պօզնէրի)

ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ Է ԲԵՌԼԻՆԻՑ և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ։ (Կովկասեան հանքային ջրերում)։
Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.
(Կ. Հ.) տռ. 104. 50—50

ՉԸ ՊԷՏՔ Է ՄՈԼՈՐԵՑՆԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Լուրջ անձինք ամենայն իրաւամբ զգուշացնում են հասարակութիւնը այն թեթևամիտ վերաբերմունքի մասին, որ ցոյց է տալիս ռուսական մամուլի մի մասը, քարոզելով և տարածելով այնպիսի մտքեր, թէ մեր թշնամիները՝ Աւստրիան և Գերմանիան՝ անկարող են երկար պատերազմել և պէտք է շուտով պարտութիւն կրեն, որովհետև չունեն պաշար, դրամ, չունեն կազմակերպված մատակարարութիւն, ռազմամթերք և այլն։ Չը կայ աւելի վտանգաւոր բան, քան երբ հակառակորդի և թշնամու մասին թիւր և սխալ տեղեկութիւններ ենք ունենում և կարծում ենք, թէ նրանք անզօր են և տկար։ Տարածելով հասարակութեան մէջ մտքեր թշնամու անզօրութեան, տկարութեան և անպատրաստութեան մասին, մենք խաբում ենք մեզ, մոլորեցնում հասարակական կարծիքը։ Դրա հետևանքը այն կը լինի, որ երբ պատերազմի դաշտի որևէ մի կէտում մենք կրենք մի փոքր անաջողութիւն, այդ անաջողութիւնը կարող է շատ վատ ազդել հասարակական ոգու տրամադրութեան վրա և լքում առաջ բերել։

Ներկայ պատերազմի վրա մենք չը պէտք է թեթևամտօրէն նայենք։ Մենք պէտք է լաւ ըմբռնենք և ըմբռնել տանք հասարակութեան, որ գործ ունենք լուրջ, տոկուն, յամառ և զօրեղ թշնամիների հետ, որոնք յայտարարել են մեր հայրենիքին՝ Ռուսաստանին կեանքի և մահվան պատերազմ, որոնք շատ և շատ կողմերից, տեխնիկայի, գիտութեան և կուլտուրայի զարգացման կողմից շատ և շատ բարձր են կանգնած մեզանից, որոնք մտել են պատերազմի դաշտը կանխապէս կշռելով ամեն բան և ամեն հաւանականութիւն։ Ոչ, Աւստրիան և Գերմանիան արհամարհելի քանակութիւններ և որակութիւններ չեն, quantités négligeables. Նրանք վտանգաւոր թշնամիներ են, ուստի և մենք պէտք է զգաստ և պատրաստ լինենք և չափենք վտանգի մեծութիւնը, ուղիղ նայենք այդ վտանգի վրա, որպէսզի կարողանանք և դիմադրել նրան մեր ամբողջ ույժով և կարողութեամբ։

Շատ հաւանական է, որ մեր թշնամիները սկզբում աջողութիւն ունենան և մենք հանդիպենք անաջողութեան. դա չէ կարող մեզ լքում պատճառել, եթէ մենք կանխապէս թեթևօրէն չը նայենք մեր թշնամու ույժերի վրա, որովհետև իմանալով այդ ույժի մեծութիւնը և ըստ այնմ նախապատրաստվելով՝ մենք վստահ կը լինենք մեր վերջնական յաղթութեան մասին։ Այո, մենք օպտիմիստ պէտք է լինենք պատերազմի ելքի մասին, բայց այդ օպտիմիզմը պէտք է առողջ լինի. մենք պէտք է իմանանք, որ մենք միայն մեր ամբողջ ույժերը լարելով, միայն անսահման անձնուիրութիւն և զոհողութիւն ցոյց տալով՝ կը յաղթենք մեր թշնամուն, որ մեզանից և աւելի խորամանկ է, և աւելի անգութ, և աւելի ճարպիկ։ Բայց մենք կը յաղթենք, որովհետև մեր կողմն է արդարութիւնը, իրաւունքը, որովհետև մենք պաշտպանում ենք մի սուրբ դատ—տկարի և թոյլի իրաւունքը զօրեղի, բռնութեան դէմ։

Այդ պատճառով շատ ճիշդ է նկատում ռուս յայտնի հասարակական գործիչ իշխան Վոլկոնսկին «Рѣчь» թերթի մէջ, երբ գրում է, թէ գործի օգուտը պահանջում է, որ մամուլը շիտակօրէն ցոյց տայ ժողովրդին ներկայ պատերազմի արտակարգ նշանակութիւնը, նրա անսովոր դժուարութիւնը և յաղթութեան անկասկած լինելը միայն այն պայմանով, որ ժողովրդական ոգին մինչև վերջը տանէ փորձանքը։

Նոյնպէս մեծ սխալ է գործում ռուս մամուլի մի մասը, երբ քարոզում և պահանջում է, որ գերմանացիների գործած անգթութիւնների և խժդժութիւնների հանդէպ՝ մենք ևս ռեպրեսիաներ գործ դնենք մեր երկրում ապրող գերմանացիների դէմ և վրէժխնդիր լինենք։ Երբ մենք դատապարտում ենք մի գործ, մենք չը պէտք է նոյնը գործենք. այլապէս մենք ևս կը դառնանք նոյնպիսի ոճրագործ և անարժան՝ քաղաքակիրթ ազգ կոչվելու։ Գերմանական զինուորականութիւնը, գործելով անգթութիւններ և բարբարոսութիւններ, արատաւորում է գերմանական քաղաքակրթութիւնը և անունը, անջնջելի արատ է ձգում իր հայրենիքի վրա. նոյնը կանենք և մենք, եթէ հետևենք գերմանացիների օրինակին. մենք կարատաւորենք ռուսական մեծ անունը և փառքը։

Մենք չը պէտք է գործադրենք «ակն ընդական և ատամն ընդ ատաման» մովսիսական անգութ օրէնքը. մենք պէտք է ցոյց տանք, որ քրիստոնեաներ ենք և գիտենք մեծահոգի լինել նոյն իսկ թշնամիների հանդէպ։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Զինուորական մինիստրութիւնը պաշտօնապէս հրատարակել է, որ մեծ բրիտանական զօրքը, որը գտնվում է մեր ձախակողմեան ճակատին, Մասսից դէպի արևմուտք, ենթարկվեց գերմանացի զօրքերի յարձակման՝ զարմանալի տոկունութեամբ։ Անգլիացիք ցոյց տուին ուժեղ դիմադրութիւն։ Ֆրանսիական զօրքը, որ գտնվում էր միևնոյն տեղում, դիմեց յարձակման երկու զօրամասերով։ Առաջին ռազմագծի վրա գտնվող աֆրիկական զօրքերը անզուսպ ոգևորութեամբ, չը նայած շեշտակի կրակին, առաջ դիմեցին։ Պրուսական հեծելազօրը մի քանի անգամ հակա-յարձակման դիմեց, և աֆրիկացիք պէտք է նահանջէին, պատճառելով սակայն ահագին կորուստ թշնամուն։ Պրուսական օրինակելի հեծելազօրը այդ կռւում խիստ քայքայվեց։

Մասսից դէպի արևելք ֆրանսիական զօրքերը առաջացան այնպիսի տեղերով, որ չափազանց դժուար էր յարձակման համար։ Զօրքերը անտառներից դուրս գալիս ենթարկվում էին ուժեղ յարձակումների և, յամառ կռւից յետոյ, հարկադրված էին նահանջել դէպի հարաւ Սէմուա գետից ոչ հեռու։

Գեներալ Ժոֆֆրի հրամանի համաձայն, ֆրանսիական և անգլիական զօրքերը ներկայումս գրաւում են ամուր դիրքեր, որոնց նրանք չէին թողնի, եթէ բէլգիացիների զարմանալի ուժեղ աջակցութիւնը թոյլ չը տար նրանց մտնել Բէլգիա։ Այդ ամեն դիրքերը պահվեցին բոլորովին անձեռնմխելի։ Այդ կռիւներում ֆրանսիական հեծելազօրը համարեա կորուստ չունեցաւ։ Ֆրանսիական արտիլէրիան մի անգամ ևս ցոյց տուեց իր գերազանցութիւնը։ Օֆիցէրների և զինուորների տրամադրութիւնը շատ լաւ է, զօրքերի ֆիզիքական դրութիւնը նոյնպէս լաւ է։

Մերձաւոր ճակատամարտը ունենալու է փոքր ինչ այլ բնոյթ. առաջիկայ մի քանի օրվայ ընթացքում ֆրանսիական զօրքերը պահելու են իրանց ինքնապաշտպանողական դրութիւնը մինչև կը գայ րոպէն, երբ նրանք նորից եռանդով յարձակման կը դիմեն։

Ֆրանսիական զօրքերի կորուստը խոշոր է, բայց գերմանական զօրքը նոյնպէս տուժեց և ստիպված էր կանգ առնել իր հակայարձակման մէջ և ամրանալ նոր դիրքերում։

Լօթարինգիայում ֆրանսիական զօրքերը երէկվայ ամբողջ օրը չորս հակայարձակում գործեցին, պատճառելով գերմանացիներին չափազանց ծանր կորուստներ։ Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ մենք այժմ ազատ մուտք ունենք դէպի բոլոր այն ծովերը, որոնք բաց են մեր մատակարարական գործողութիւնների համար։ Միւս կողմից Ռուսաստանը եռանդով յարձակման է ձեռնարկել դէպի Արևելեան Պրուսիայի ամենախորքը։ Հարկ է ցաւել, որ կատարված բուռն յարձակումը, դժուար իրագործելի լինելով, որը անկարելի էր նախատեսել, իր նպատակին չը հասաւ։ Այդ յարձակումը անկասկած կը կարճէր պատերազմը։ Սակայն, միւս կողմից, մեր ինքնապաշտպանողական դրութիւնը մնում է անձեռնմխելի մեր թշնամու հանդէպ, որ արդէն բաւականին թուլացել է։ Բոլոր ֆրանսիացիք, հարկաւ, կը ցաւեն, որ մեր զօրքերը ժամանակաւորապէս հեռացան Էլզաս-Լօթարինգիայում մեր գրաւած մի քանի տեղերից։ Նրանք կը ցաւեն նմանապէս նրա համար, որ մեր հայրենիքի մի քանի վաշտերը, ցաւ ի սիրտ պիտի ասել, դառնալու են պատերազմի բեմ։ Սակայն այդ փորձութիւնները անխուսափելի են. նրանք ժամանակաւոր են։ Այդ հանգամանքների ույժով գերմանական հեծելազօրը մտաւ Րուբէ-Տուրկուէնի շրջանը, որ պաշտպանվում է լոկ ազգաբնակութիւնից կազմված մի բուռն կամաւոր զօրամասով։ Կառավարութիւնը և զինուորական իշխանութիւնները երկրի առաջ պարզում են բովանդակ ճշմարտութիւնը և հէնց դրանով յայտնում են իրանց բացարձակ հաւատը, թէ վերջնական աջողութիւնը կախված է մեր տոկունութիւնից ու անձնուիրութիւնից։

ՕՍՏԵՆԴԷ.—Օստենդէից 5 մղոն հեռաւորութեան վրա առաւօտը երևացին 15 գերմանացի հեծեալ զինուոր։ Տեղի ունեցաւ ընդհարում բէլգիացի ժանդարմների հետ, որոնք կորցրին 5 սպանված և 10 վիրաւոր։ Գերմանացիք ետ մղվեցին։

ԱՆՏՎԵՐՊԷՆ.—Գիշերվայ ժ. 1-ին գերմանացի 6 օֆիցէր «Ցէպպելինով» փորձեցին ռումբեր նետել թագաւորական պալատի վրա. 6 գնդակ ընկան պալատի մօտ, քանդելով մի քանի տուն։ Հարևան մասում սպանվեցին 12 հոգի, որոնցից մի քանիսը կանայք։ «Ցէպպելինի» վրա մի քանի անգամ թնդանօթ պարպվեց բերդերից։ Լուրերի համաձայն, դիրիժաբլը ընկել է քաղաքից դուրս։

«Ցէպպելինը» բռնվեց։ Նրա մէջ նստած 15 գերմանացիները գերվեցին։

ԼՈՆԴՈՆ.—Զինուորական մասնագէտները միաբերան այն կարծիքն են յայտնում, թէ ֆրանս-բէլգիական ռազմաբեմում դրութիւնը առաջին մեծ ճակատամարտից յետոյ ներկայանում է թէև լուրջ, բայց ոչ երբէք աննպաստ դաշնակիցների համար։ Նրանց զօրքը ստիպված է որոշ ժամանակ վարել ինքնապաշտպանողական տակտիկա ֆրանսիական առաջին ռազմագծում, բայց գերմանացիք չափազանց յոգնել են և կրեցին խոշոր կորուստներ. նրանց արշաւանքը այժմ որոշ չափով կանգ է առել։

ԼՈՆԴՈՆ.—Օստէնդէից հաղորդում են, որ շաբաթ օրը խոշոր ճակատամարտը սկսվեց ֆրանսիական հեծելազօրի արշաւանքով Շարլրուայի մօտից և Ժամբլուի գրաւմամբ, սակայն ֆրանսիական զօրքերը օժանդակ օգնութեան բացակայութեան պատճառով ստիպված էին նահանջել դէպի Շարլրուա։ Գերմանացիք առաջացան Բրիւսէլից դէպի արևելք տանող բոլոր ճանապարհներով՝ Սամբր գետն անցնելու մտադրութեամբ։ Մինչև կիրակի օրը դաշնակիցները մնում էին իրանց դիրքերում։ Հակառակորդների ույժերը ըստ երևոյթին հաւասար են։ Ճիշդ տեղեկութիւններ կիրակի օրվայ կռւի մասին տակաւին չը կան։

Ռէյտէրի գործակալութեանը Օստէնդէից տեղեկացնում են, որ գերմանական հեծելազօրը ամենուրեք ճակատեց ֆրանսիական հեծելազօրին ու հետևակ գնդերին։ Հակառակորդների ույժերը ըստ երևոյթին մօտաւորապէս հաւասար են։ Անգլիական զօրքերի դերը ահագին նշանակութիւն է ձեռք բերում։ Գերմանացիք անաջող փորձ արին գրաւելու Անդէրլիւսը և Ժիւմէն։ Ժիւմէի ռմբակոծութիւնը լուրջ հետևանքներ չունեցաւ։

Այստեղ մեծ ուշադրութեամբ սպասում են տեղեկութիւնների Նամիւրի և ֆրանսիական սահմանի միջև տեղի ունեցող մեծ ճակատամարտի հետևանքների մասին։ Պարիզից տեղեկացնում են, որ կռւի կենտրոն հանդիսանում է Շարլրուան, որը երկու կողմերն էլ մի քանի անգամ գրաւել են փոխ առ փոխ։

Բրիւսէլից տեղեկացնում են, որ գերմանական զինուորական իշխանութիւնները քաղաքից պահանջեցին վճարել 3 օրվայ ընթացքում 50 միլիոն ֆրանկ։

ՆԻՇ.—«Պրէսս-Բիւրօն» պաշտօնապէս հաղորդում է, որ այսօր, ցերեկվայ ժամը 4-ի մօտերը, մեր զօրքերը նորից գրաւեցին Շաբացը։ Թշնամին վանվեց Սավա գետի միւս ափը։ Ներկայումս աւստրիացիք վռնդված են ամբողջ Սերբիայից։ Նահանջելով, թշնամին հանդիպածը աւերում է, ամեն ինչ փլատակում, մի շարք գազանութիւններ ու բռնութիւններ է գործում անգամ տասն տարեկանից պակաս երեխաների վրա։ Մի քանի գիւղեր բոլորովին ոչնչացված են, բնակիչները սրի են քաշված։ Ամենավառ երևակայութիւնը չէ կարող պատկերացնել այն բոլոր գազանութիւնները, որոնց մանրամասնութիւնները կը յայտնվեն։ Նրանց հետ համեմատած նիւթական կորուստներն աննշան են։

Երեք օր առաջ աւստրիացիք ռմբակոծեցին Բէլգրադը ցերեկվայ ժամը 2—5։

ԲԷԼԳՐԱԴ.—Անցեալ գիշեր աւստրիացիք ռմբակոծեցին Բէլգրադի հարաւային մասը։ Մի քանի տուն փլավեցին, սինագոգը քանդվեց։ Սպանվել և վիրաւորվել են մի քանի մարդ։

ՆԻՇ.—Կրագուէվացից հաղորդում են, որ սերբ զօրքերը վանեցին թշնամուն Դրինայի ամբողջ ցամաքից։ Լիւբովիան նորից սերբերի ձեռքումն է։ Աւստրիական զօրքերը, նահանջելով այդ սահմաններից, գազանութիւններ էին գործում։ Պրէպօլ մտաւ աւստրիական փոքր մի զօրամաս։

Սերբիական «Պրէսս-Բիւրօն» հաղորդում է. «Այժմ, երբ Սերբիան, շնորհիւ իր հերոս զաւակների, ջարդեց աւստրիական զօրքերին, փախուստի դարձրեց նրանց և մաքրեց երկիրը թշնամուց, չէ կարելի չը մատնանշել ցաւելով, որ աւստրիական տեղեկութիւնները ձգտում են մոլորեցնել Եւրոպային։ Իրողութիւնը այն է, որ աւստրիացիք իրանց «յաղթական արշաւանքից» յետոյ տուին աւելի քան 4000 գերիների, 40-ից աւելի թնդանօթ, մեծ քանակութեամբ ռազմանիւթ, կռւի դաշտում թողին անհամար դիակներ։ Եւ ցաւ ի սիրտ պիտի ասել, որ մի քանի աւստրիական զօրամասեր գազանութիւններ գործ դրին կանանց, ծերունիների և երեխաների վրա։ Սերբ ժողովուրդը պարտված թշնամու փութանակի նահանջի մէջ տեսնում է Աստուծոյ պատիժը մեր երկրի վրա դաւաճանօրէն յարձակվելու համար»։

ՍԿՕՊԼԷ.—Պատերազմի յայտարարութեան ժամանակից ի վեր Դիբրի շրջանում՝ ալբանական սահմանագլխի վրա՝ տեղի են ունենում զինված ընդհարումներ ալբանական հրոսակախմբերի և սերբ պահակ զինուորների միջև։ Լոյս օգ. 4-ի գիշերը ալբանները յարձակում գործեցին Ժէրօվնիցայի և Շախրովիցայի վրա, բայց յետ մղվեցին։

Ձեռքի տակ եղած ստոյգ տեղեկութիւնների համաձայն, ալբանները Աւստրիայից ստացել են մեծ քանակութեամբ հրացան ու թնդանօթ՝ Սերբիայի վրա արշաւելու համար։

Ալբանական սահմանում՝ Պիշկոպէում տեղի են ունենում խորհրդակցութիւններ, նաև բաժանվում են հրացաններ ալբան կաթոլիկներին։ Պրինց Վիդը աշխատում է հաշտվել ալբան-մահմեդականների հետ։ Մեծ գումարներ բաժանված են ալբան պարագլուխներին և աչքի ընկնող ալբաններին։

Չեռնոգորիայի սահմանի վրա յարձակում են պատրաստում յայտնի ալբան պարագլուխներ Իսսա Բօլէտինացը և Ցուրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ներկայ պատերազմի սկզբից սերբերը վերցրել են աւստրիական 43 դաշտային թնդանօթ, 6 գաուբից, 86 ռազմարկղ, 4 դաշտային թնդանօթ, հիւանդանոց, հացարաններ, ուտեստի պահեստ, շատ ռազմամթերք, կօշիկ և ձի։

Գերմանական արևմտեան ճակատում, ըստ շվէդական աղբիւրների, սպանվել է գերմանական 10-րդ զօրաբանակի հրամանատար Էմմիխը և ծանր վիրաւորվել է 14-րդ զօրաբանակի հրամանատար Գօյնինգէն-Գիւնէն։ 10-րդ զօրաբանակի հրամանատար նշանակվել է գեն. լէյտ. Մարվիցը։

Մեծ-բրիտանական կառավարութիւնը հրատարակել է, որ անգլիական զօրքերը կիրակի օրը մասնակցում էին Մօնսի շրջակայքում տեղի ունեցող կռւում և մնացին իրանց դիրքերում։ Տեղեկութիւն է ստացված, որ Նամիւրի պաշտպանողական առաջին ռազմագիծը առնված է։ Այդ հանգամանքը ստիպում է դաշնակից զօրքերի մի մասին նահանջել Սամբրից նախկին ինքնապաշտպանողական դիրքերը։ Ֆրանսիական սահմանից դեռ տեղեկութիւններ չեն ստացվել կորուստների մասին։

Սան-Ջիօվանի-դի-Մեդուայից ստացված տեղեկութիւնների համաձայն, Բօկա-դի-Կատարրօյի ռմբակոծութիւնը անգլօ-ֆրանսիական նաւատորմի կողմից՝ զգալի վնաս պատճառեց աւստրիական դիրքերին։ Ռմբակոծութեանը հաւանօրէն մասնակցութիւն են ցոյց տալիս չերնոգորական թնդանօթները Լօվչէն լեռան բարձունքներից։

Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. օգոստոսի 10-ին աւստրիական առաջապահ զօրամասերը թնդանօթներով փորձեցին բռնել մեզ Սեբէտ գետի վրա, Տարնօպօլի և Զէբրակովի շրջանում, բայց մի շարք կռիւներից յետոյ յետ մղվեցին։ Մեր արշաւանքը շարունակվում է։ Ձեռք են ձգված սայլեր, 2 գնդացիր ու շատ ռազմամթերք։

Գրուբէշովից դէպի հարաւ մենք գնդակահարման ենթարկեցինք աւստրիական մի աէրօպլան և սպանեցինք 2 օդագնացի և մէկին էլ վիրաւորեցինք։

Մեր հեծելազօրը խզել է երկաթուղային երթևեկութիւնը Կամէնկի կամուրջի վրայով։

Արևելեան-պրուսական ճակատին գերմանական զօրքը նահանջել է Գումբէնդէնից, որի ժամանակ նրա մի մասը կենտրոնանում է Կենիգսբէրգի բերդում։ Սկզբում ամրացրած դիրքերը Անգէրապ գետի վրա՝ հակառակորդը թողեց առանց կռւի։ Անգէրապ գետի այն կողմի ճանապարհը լի է փամփուշտներով, ռազմամթերքներով, որ գերմանացիք թողնում են իրանց նահանջը դիւրացնելու համար։

Ինստէրբուրգ և Անգէրբուրգ քաղաքները մերոնք գրաւել են։

Նէյդէնբուրգից դէպի հիւսիս օգոստոսի 10-ին և 11-ին տեղի ունեցան յամառ և մեզ համար նպաստաւոր կռիւներ գերմանացիների մեծաքանակ ույժերի դէմ։

Օգոստոսի 11-ի առաւօտը Օրլաու—Ֆրանկէնաու ռազմագիծը գրաւած գերմանական զօրքերը մերոնց յարձակումից շտապեցին նահանջել դէպի Օստարօդ, թողնելով թնդանօթներ, գնդակացիր, շատ ռազմարկղներ ու գերիներ։

Ֆրանս-գերմանական պատերազմաբեմում կռիւները չը փոխեցին ընդհանուր դրութիւնը։ Գերմանացիների աջ թևի յարձակումը Մօնսի մօտերը յետ մղվեց։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, գերմանական զօրքի գլխաւոր հրամանատարներից սպանվել են Միւլհաուզէնի մօտ 29-րդ զօրամասի պետ գեներալ Էբէրտ, Լիէժի մօտ՝ երրորդ հեծելամասի պետ ֆօն-Բիւլօվ և գեներալ Վօւսօվ։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Գերմանական զօրքի ընդհանուր հրամանատարի պաշտօնական հաղորդագրութեան մէջ խոստովանված է, որ ռուսաց զօրքը յաղթական արշաւանքի է ձեռնարկել։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Վօլֆի գործակալութիւնը հաղորդում է Բեռլինից, որ աւստրիական կայսրը հրամայեց Ցինդաօյում գտնվող աւստրիական յածանաւ «Կայզէրին Էլիզաբէտին» մասնակցել բերդի պաշտպանութեանը։

ՉԻՖՈՒ.—Ցինդաօյի հետ հաղորդակցութիւնը խզված է։ Նաւահանգստում գտնվում են գերմանական «Շարնհօրստ» և «Գնէյզէնաու» զրահապատ յածանաւերը։

ՏՕԿԻՕ.—Աւստրիական «Էլիզաբէտ» յածանաւը գտնվում է Ցինդաօյում։

ԼՕՆԴՕՆ. — Րէյտէրի գործակալութիւնը ճշդում է այն տեղեկութիւնը, որ գերմանական մի զօրամաս Աֆրիկայի հարաւարևմուտքից փախել է Հարաւ-Աֆրիկայի նահանգները։

Գերմանական մի զօրամաս, որ դուրս էր եկել Վինդգուկից, անցաւ Օրանժ գետով անգլիական Նամակվելէնդ գաւառը. այստեղ զօրամասը կորցրեց մի քանի հոգի՝ հոլլանդացի հողագործների հետ ունեցած կռւում։

Ցինդաօյում ստացվեց և կարդացվեց Վիլհէլմ կայսրի ծածկագիր հեռագիրը, որով հրամայվում է բերդապահ զօրքին պաշտպանել իրանց դիրքերը մինչև վերջին ծայրայեղութիւնը։ Գերմանացիք ուժանակներ են դրել բարձր շինութիւնների մէջ, նաև ականներ են լցրել երկաթուղային կամուրջի տակ։ Գերմանական տերրիտօրիայի սահմաններում չինական արուարձանները ոչնչացված են, ըստ որում բնակիչների ֆանզաները հատուցված են։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Հրատարակվեց Բարձրագոյն անուանական հրաման այն մասին, որ հաստատվում է Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի նախագահութեամբ պատերազմի կանչված ընտանիքներին, նաև վիրաւոր ու ընկած զինուորականների ընտանիքներին խնամելու գերագոյն խորհուրդ։

Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի նախագահութեամբ կայացած խորհրդակցութիւնից յետոյ որոշվեց բանալ ամենուրեք ժամանակաւոր յանձնախմբեր՝ օգնելու համար փոքրահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին, որոնց տղամարդիկ կանչված են հայրենիքի պաշտպանութեան համար։

Արդարադատութեան մինիստրի օգնականի նախագահութեամբ կայացած առանձին խորհրդակցութիւնը գտաւ, որ ոչ մի հիմք չը կայ տարածելու մօրատօրիումը պետութեան բոլոր տեղերի վրա։

Արգելված է արտահանել Ռուսաստանից Եւրօպական Ռուսաստանի ցամաքային սահմանով և Սպիտակ, Բալտիկ, Սև ու Ազովեան ծովերի բոլոր նաւահանգիստներով բանջարեղէն, հացահատիկ, միս և այլ մթերքներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ. — Լորդերի պալատում Լորդ Կիտչէները, որ հանդէս եկաւ առաջին անգամ իբրև զինուորական մինիստր, մատնանշում է, որ ոչ ոք չէ կարող նախագուշակել, թէ երկա՞ր կը շարունակվի պատերազմը, թէ ոչ։ «Անգլիական արշաւող զօրամասը կռւի դաշտն եկաւ Ֆրանսիայի հիւսիս-արևմտեան սահմանի կողմից, շարժվեց դէպի Մօնսի շրջակայքը, 36 ժամ կանգնած մնաց թշնամու գերազանց ույժերի դէմ և ցոյց տուեց արիութիւն։ Բելգիան գիտէ, թէ ինչպէս անգլիացիք համակրում են նրան, թէ ինչպէս զայրոյթ են արտայայտում նրանք Բելգիայի գլխին իջած հարուածների առիթով։ Մեծ-Բրիտանիան հաստատ վճռել է այնպէս գործել, որպէսզի Բելգիայի տուած զոհերը ապարդիւն տեղը չանցնեն։ Մեծ-Բրիտանիան չունի պարտաւորեալ զինուորական ծառայութիւն, բայց կան ույժերի ընդարձակ աղբիւրներ ինչպէս մայր երկրում, այնպէս և նրա գաղութներում։ Հնդկաստանը, Կանադան, Աւստրալիան, Նոր-Զէլանդիան ուղարկում են ուժեղ զօրախմբեր։ Տերրիտօրիալ զօրքերի 70 գումարտակ գրվել են կամաւոր զինուոր։ Երկրից դուրս ծառայելու կան 100,000 նորակոչներ և դեռ պահեստի խմբեր։ Մեծ-Բրիտանիայի թշնամիների մաքսիմալ ույժերը կը պակասեն աստիճանաբար, մինչդեռ բրիտանական օժանդակ օգնութիւնը կուժեղանայ, մինչև Մեծ-Բրիտանիայի զինուորական ույժը քանակով ու որակով համապատասխան կը լինի բրիտանական պետութեանը։ Բրիտանական զօրքը առաջին 6 ամիսների ընթացքում կարող է ուժեղանալ մօտ 30 զօրաբանակ դառնալով. բայց եթէ պատերազմը ձգձգվի և եթէ զոհերը աւելի մեծ երևան, քան երբևէ պահանջվել է ազգից, ես յոյս ունեմ, վերջացրեց Կիտչէները, որ պարլամենտը և ժողովուրդը չեն հրաժարվի այդ զոհաբերութիւններից» (ծափահարութիւն)։

Զինուորական մինիստրը վճռեց ներել այն դասալիք զինուորներին, որոնք կը կամենան մտնել զօրքի մէջ։

Աչքի ընկնող քաղաքական գործիչները կազմակերպում են առանձին զօրամաս։

Յանձնաժողով է հաստատված Բելգիայից փախստականներին օգնելու համար։

Պէկինից հաղորդում են, որ Ցինդաօյի պաշարումը սկսվեց։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Բեռլինից հեռագրում են, որ կառավարութիւնը պատուիրագրեց արտասահմանում գտնվող լանդշտուրմի երկրապահ զինուորներին անյապաղ հայրենիք վերադառնալ։

ՑԵՏԻՆԻԷ.—Սկուտարի միջազգային զօրամասի մէջ գտնվող 200 ֆրանսիացի զինուորները 5 օֆիցէրների գլխաւորութեամբ, որոնք լինելու են Չերնոգորիայի կարգադրութեան ներքոյ, եկան և ընդունվեցին գահաժառանգից և ազգաբնակութիւնից։ Թագաւորը իր ընտանիքի հետ ողջունեց ֆրանսիացիներին։ Ֆրանսիական դեսպանը ճառեց, որին պատասխանեց Նիկոլայ Թագաւորը։ Նուագվեցին չերնոգորական և ֆրանսիական ազգային օրհներգները։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Ռոստօկում, տեղը եկած առաջին ռուս բարօն Բիստրոմի ասելով, ներկայումս գտնվում են 700 ռուսներ, որոնց թւումն են ուսանողներ, կանայք և երեխաներ։

Վիէննայում զգացվում է կենսական մթերքների մեծ պակասութիւն։ Կառավարութեան կարգադրութեամբ ազգաբնակութեանը ձրիաբար հացահատիկ է բաժանվում։ Վիէննայի ծառատունները վերածված են բանջարանոցների։ Դրութիւնը չափազանց լուրջ է։

Ամերիկեան կառավարութիւնը դիմեց մի կոչով, որով արգելվում է մասնակցել եւրօպական պատերազմներին, և նախազգուշացնում է, որ այն անձը, որը կը մեկնէ Ամերիկայից պատերազմական գործողութիւններին մասնակցելու նպատակով, կը զրկվի վերադառնալու իրաւունքից։

Վօլֆի գործակալութիւնը տեղեկացնում է, որ մարօկկեան կառավարութիւնը օգոստ. 6-ին յանձնել է գերմանական հաւատարմատարին նրա անցագրերը և ույժով ուղարկել է նրան միսսայի պաշտօնեաների հետ միասին ֆրանսիական յածանաւը, որով և հաւատարմատարին բերել են Պալէրմօ։

Գրէյը յայտարարել է, որ Հիւսիսային ծովում վտանգ է սպառնում նաւագնացութեանը գերմանացիների դրած ականներից։

Տեղիս լրագիրները տպել են Հռոմից ստացված մի հեռագիր թէ՝ Հռոմի դիւանագիտական շրջաններում ստացված տեղեկութիւնների համաձայն, աւստրիական կայսրի առողջութիւնը վատացել է. ամեն բոպէ սպասվում է եղերական վախճան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սօֆիայի մեր կայսերական դեսպանի տեղեկացնելով, Բուրգասի նաւահանգիստը լի է ականներով. շոգենաւերի մուտքն արգելված է։

ՍԿՕՊԼԷ.—Երէկ և այսօր տեղս բերին 1400 վիրաւոր. սպասվում են նոր խմբեր։

ՍՕՖԻԱ.—Շիպկայի պաշտպանութեան տարեդարձի առիթով մատուցվեց հանդիսաւոր պատարագ բարձր իշխանութեան ներկայացուցիչների, որոնց թւում և Ֆէրդինանդի ներկայացուցչի, նախկին մինիստրների, ռուսաց դեսպանի և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ։ Պատարագից յետոյ պատերազմի վետէրանները գնացին դէպի Ազատարար Կայսրի արձանը և պսակներ դրին։

Բօլգարական սլաւօնական ընկ. նախագահը հետևեալ հեռագիրն ուղարկեց Պետերբուրգ սլաւօնական ընկերութեանը. «Բօլգարիայի սլաւօնական միութիւնը, իր եղբայր ռուս ժողովրդի հետ ապրելով մեծագոյն պատմական բոպէ, որ վճռական նշանակութիւն ունի սլաւօնականութեան վիճակի համար, լիակատար համակրանք է արտայայտում պատերազմի բարոյական գաղափարին ընդդէմ գազազած տէվտօնիզմի, աղօթում է սլաւօնական ճշմարտութեան լիակատար յաղթութեան համար և յանձին ձեր առաքում է իր Ազատարարին ամենաբուռն բարեմաղթութիւններ և յղում է ձեր տրամադրութեանը իր լուման՝ 10,000 ֆրանկ ռուս զինուորների ընտանիքների օգտին։ Դրամը յանձնված է ռուսաց միսսային Պետերբուրգ փոխադրելու համար»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Յայտնի երաժշտագէտ Ռախմանինօվը կանչված է իսկական զինուորական ծառայութեան։

◆ Նօբէլի «Մազութ» ֆիրման ցանկութիւն է յայտնել նուիրել Կարմիր Խաչի կարիքների համար երկու վագօն բենզին, այն է՝ 1500 պուդ։

◆ Ճշդվում է, որ Շաբացի մօտ աւստրիացիներից ընկան 8000 հոգի։

◆ Իտալիայում նկատվում են ռազմի տենդային պատրաստութիւններ։ Իտալիան պատրաստվում է պատերազմի։ Տրիպօլիից բոլոր իտալական գնդերը հրաման ստացան հայրենիք վերադառնալ։ Բայց թէ ում դէմ են ուղղված յիշեալ պատերազմական պատրաստութիւնները,—յայտնի չէ. յայտնի է միայն այն, որ իտալական լրագիրների թղթակիցները մեկնել են Վիէննայից հայրենիք։

◆ Հայ հասարակութեան հաշւով Նոր-Նախիջևանում արդէն ձեռնարկված է հաստատելու մի հիւանդանոց վիրաւոր զինուորների համար։

◆ Միտք է յղացել միջնորդել Պետերբուրգ, որպէսզի Վարշավայի համալսարանը փոխադրվի ընդմիշտ Ռօստով քաղաքը Դ/վ. Այդ առիթով Ռօստովի քաղաքագլուխ Խմէլնիցկին ներկայանալու է ժող. լուսաւորութեան մինիստրին։

◆ Ներկայումս Ռօստովումն է գտնվում առ ժամանակ պարսից նախկին պետական խնամակալը։

◆ Ամերիկեան դեսպանը խնդրեց արտաքին գործերի մինիստր Սազօնովին՝ արագացնել Պետերբուրգի գերմանական դեսպանատան շինութիւնը քարուքանդ անելու գործի քննութիւնը։ Սազօնովը պատասխանեց, որ քննութիւնը առաջ է գնում նորմալ կերպով։

◆ Պետերբուրգի պետական բանկում յատուկ ընթացիկ հաշիւ է բացված Նորին Մեծութեան անունով, ուր ստացվում են այն բոլոր դրամները, որոնք նուիրաբերվում և դրվում են Կայսրի անձնական տրամադրութեան տակ՝ վիրաւոր զինուորականներին խնամելու համար։

◆ «Н. В.»-ի ասելով, Պետերբուրգում ձերբակալվել են շատ կասկածելի անձինք, որոնց մէջ կան բարօններ ու խոշոր կալուածատէրեր, որոնց նկատմամբ պտտվում են կասկածելի լուրեր։

◆ «Кавказъ»-ին Դժիմալովօյից հեռագրում են. «Օգոստոսի 11-ին ցերեկով մեր հեծելազօրը յետ նեղեց աւստրիական առաջին հեծելազօրին Դժուրինից դէպի արևմուտք և ստիպեց նրան կռւի բռնվել, որի հետևանքով թշնամին հեռացաւ դէպի արևմուտք, խոշոր կորուստներ տալով։ Մենք ձեռք ձգեցինք մի քանի թնդանօթներ»։

ԼԵՀԵՐԻ ԿՈՉԸ

Վարշավայից հեռագրում են «Рѣчь»-ին, որ տեղական՝ տարբեր ուղղութիւն ունեցող բոլոր թերթերում, գերմանացիների պրօկլամացիաների առիթով, տպված է հետևեալ կոչը.

«Բոլոր դժբաղդութիւնների հետ միասին, որ կրում է մեր երկիրը, պատերազմը սպառնում է մեզ՝ դուցէ ամենամեծ դժբաղդութիւնը—առողջ մտքի և ժողովրդական գիտակցութեան մթագնումը։ Զանազան շշնջիւններով ջանում են լեհերին համոզել, որ նրանք դադարեն քաղաքական գիտակցութեան ազդեցութեանը հաւատալուն, գիտակցութիւն, որը նրանց թելադրում է թէ ինչ վերաբերմունք պէտք է ցոյց տալ լեհական հողը մտնող զօրքին, որի միջից լսվում են գերմանական և անգամ գալիցիական ձայներ, որոնք հաւատացած են, որ Լեհաստանը կարելի է փրկել գերմանացիների դաշնակցութեամբ։

«Զանազան ագիտացիաներով փորձեր են լինում համոզելու մեր ժողովրդին, որ նա պարտաւոր է ակտիվ մասնակցութիւն ունենալ սարսափելի պատերազմում, որը տարվում է մեր հողում։

«Դրան հասնելու նպատակով, գիտակցու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ VIII ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐԻ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ*)

IV

Ամսի 11-ին, առաւօտեան ժամը 8-ին հանրակառքերով և կառքերով ճանապարհվեցինք Կարապետ եպ.-ի և Բաբգէն վ.-ի ուղեկցութեամբ դէպի Օշական և Աշտարակ։ Եղանակը լաւ էր. Մեծ և Փոքր Մասիսները երևում էին իրանց փառահեղ և հմայիչ տեսքով. նոյնպէս և Արարատեան դաշտը իրան շրջապատող բազմաթիւ ձիւնապատ լեռներով. Արագածը, Արայի, Գեղամայ լեռները Մասիսի շարքում, Ալաջա սարը, Կողբի սարը և այլն։

Օշականից այդ բոլոր լեռները և Արարատեան դաշտը, շնորհիւ լաւ եղանակի, տեսնվում էին հիանալի կերպով։ Շնորհիւ այդ հիանալի տեսարանի, աշակերտութեան տրամադրութիւնը աւելի ևս բարձրացաւ. ամբողջ ճանապարհին լսվում էին երգեցողութիւն, ուրախութեան բացագանչութիւններ և այլն։

Օշականում մի առանձին ակնածութեամբ և երախտագիտական բուռն զգացմունքով մտանք ս. Մեսրովբի անունով եկեղեցին, որը նորոգել է Գէորգ IV կաթողիկոսը, և իջնելով այն խորանը, ուր գտնվում է սրբի գամբարանը, աշակերտութիւնը համբուրեց՝ որպէս յարգանք հանգուցեալի արած ազգային ամենամեծ գիւտի՝ հայ գրերի կերտման։

Եկեղեցու բակում գտնվում է Վահան Ամատունու արձանը, որը կառուցել է Խրիմեան Հայրիկը։ Այդ իշխանը, լինելով ս. Մեսրովբի աշակերտ, երբ մեռնում է, իր ուսուցչը բերում է նրա աճիւնը իր տոհմական Օշականում ամփոփում։ Եկեղեցու բակում այժմ շինվում է դպրոց Մեսրովբի անունով։ Օշականում մնալով մօտ երկու ժամ, թէյ խմելով և թեթև նախաճաշիկ անելով ծխատէր քահանայի բնակարանում, ուղևորվեցինք դէպի Աշտարակ գիւղը, որը գտնվում էր մի քանի վերստ հեռաւորութեան վրա։ Աշակերտութիւնը՝ մօտենալով այդ գիւղին՝ մի առանձին ոգևորութեամբ սկսեց երգել «Ծիծեռնակը», համախմբելով գիւղացիներին այն փողոցի մօտերքը, որտեղով մեր խումբն էր անցնում։ Մենք իջանք հայոց ծխական ուսումնարանի ընդարձակ շինութեան մէջ, ուր մեզ համար ճաշ էր պատրաստված։ Այդ միևնոյն օրը այդտեղ էր եկել Երևանի նահանգապետը՝ սովեալներին արքունական ալիւր բաժանելու. դրա համար էլ մեծ բազմութիւն էր հաւաքվել այդ գիւղում։ Մինչև ճաշը մենք ոտքով բարձրացանք Մուղնի գիւղը, ուր և գտնվում էր Մուղնի վանքը, որը մեծ ուխտատեղի է։ Վանքը հին շինուածք է, ունի վանահայր վարդապետ։

Այժմ մի քանի խօսք նշանաւոր Աշտարակի մասին։ Աշտարակը բազմամարդ գիւղ է կամ, աւելի ճիշդն ասած, գիւղաքաղաք է առողջ կլիմայով և հիանալի տեսարաններով, գեղեցիկ շինութիւններով, խանութներով, ուսումնարաններով և այլն։ Գիւղից երևում են ընդարձակ այգիները, որոնք տարածվում են մի քանի քառակուսի վերստի վրա։ Ազգաբնակութեան գլխաւոր պարապմունքն է այգեգործութիւնը, որը և ծառայում է ապրուստի գլխաւոր աղբիւր։ Գիւղում կան գինեգործութեան գործարաններ. Կան խոշոր կարողութիւն ունեցողներ, որոնցից մի քանիսը մինչև անգամ հեռաւոր քաղաքներում ունեն գինու առևտրի պանդոկներ, օրինակ՝ Թիֆլիսում, Օդեսայում և այլն։ Այս գիւղում գտնվում են պրիստաւը, բուժարան, դեղատուն, մի քանի բժիշկներ, ի միջի այլոց իմ ընկեր Սարումեանը և նրա բժիշկ որդին, որը բուժարանի կառավարիչն է։ Արտաքուստ այս գիւղը շինութիւնների կողմից Վաղարշապատից պակաս չէ, հարստութեան և աշխատասիրութեան կողմից, ինչպէս վկայում են շատերը, աւելի բարձր։ Գիւղի պարծանքը նրա 6-ամեայ հայոց ուսումնարանն է, իր՝ երկու սեռի 13 ուսուցիչներով, ահագին շինութեամբ և 500 աշակերտներով, որոնցից 200-ը աղջիկներ։ Բիւջէն հասնում է 6000 րուբլու։ Կայ և պետական դպրոց, համեմատաբար սակաւաթիւ աշակերտներով։

Այս գիւղից դուրս են եկել նշանաւոր անձնաւորութիւններ, ինչպէս օրինակ հռչակաւոր Ներսէս Ե-ը, որի ծնված տունը այցելեցինք Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ։ Ցաւալի է ասել, որ այս մեծ մարդու ծննդեան տունը, նախկին երթիկաձևի հողատունը, այժմ անճանաչ շտեմարանի է փոխարկված, ուր կային թափված խոտ և զանազան իրեր։ Աշտարակցիք պէտք է աշխատեն այդ մեծ տունը պահել աւելի վայելուչ դրութեամբ, դուցէ և կախելով հռչակաւոր կաթողիկոսի պատկերը, նրա մանկութեան կահ-կարասիքը և այլն, մի խօսքով մի փոքրիկ մուզէի վերածել։ Այդպէս են անում կուլտուրական ազգերը իրանց մեծ մարդկանց յիշատակը պաշտելու համար։ Իսկ թէ որ աստիճան մեծ է եղել Ներսէս Ե-ը, որը իրաւամբ կոչվում է «պաշտպան հայրենեաց» (տապանաքարի վրա գրված), այդ՝ բոլորին յայտնի է։ Բաւական է յիշել նրա կոթողներից Ներսիսեան դպրոցը, Էջմիածնի լիճը, անտառը, նրա քաղաքական և պատերազմական գործունէութիւնը՝ իր հայրենիքը ազատելու պարսիկներին լծից և այլն, որպէսզի մենք առանձին ակնածութեամբ և երախտագիտութեամբ վերաբերվենք դէպի նրա յիշատակը։ Լիայոյս ենք, որ օրինակելի աշտարակցիք կը մտածեն իրանց և ազգի համար պարծանք համագիւղացի մեծ մարդու յիշատակը անմոռաց պահելու։ Չը պիտի թագցնեմ, որ Յովնանեան դպրոցի աշակերտութիւնը, որը լաւ ծանօթ էր Ներսէս Ե-ի գործունէութեան, խորին տրտմութեամբ հեռացաւ այն տնից, ուր ծնվել էր այդ մեծ մարդը և որը այժմ, կարելի է ասել, գոմի նման էր, թափթփած խոտերով և զանազան իրերով։ Մեզ ցոյց տուին մինչև անգամ այն անկիւնը օջախի մօտ, ուր ծնվել էր Ներսէս Ե-ը, ուր դրված է եղել նրա օրօրոցը, և այլն։ Կրկնում ենք, Ներսէսի ծննդեան տունը պիտի պահվի վայելուչ դրութեան մէջ. նա պիտի վերածվի թանգարանի և այլն։

Աշտարակից է դուրս եկել Սմբատ Շահազիզը, մեր յայտնի բանաստեղծը, որը անակնկալ մահվամբ չը կարողացաւ իր ոչնչացրած կտակը նորոգել, իր հարստութեան խոշոր մասը տալով ազգային հիմնարկութիւններին, ինչպէս մեզ յայտնել էր հանգուցեալը Կիսլովոդսկում։

Այստեղից է Նոր Նախիջևանի թեմական դպրոցի յայտնի տեսուչը, որ ունի գրական վաստակներ։

Այստեղի կեանքից է վերցրել մեր հանգուցեալ վիպասան Պռօշեանը իր բազմաթիւ վէպերի նիւթերը։ Ինչպէս պատմեցին աշտարակցիք, «Սօս և Վարդիթերի» հերոսներն իրական անձնաւորութիւններ էին և նոքերս են վախճանվել։ Աշտարակը տուել է բազմաթիւ համալսարանաւարտ անձնաւորութիւններ, հոգևորականներ և այլն։

Այդ գիւղի շրջակայքումն են գտնվում Բիւրականը՝ ուր և գտնվում է կաթողիկոսի ամառվայ վեհարանը, «Աղձք» կոչված գիւղը՝ ուր ամփոփված են հայ թագաւորների ոսկորները, որ բերել էր Վասակ Մամիկոնեանը՝ թշնամիներին յաղթելուց յետոյ։ Մեզ բոլորիս զարմացնում էր մի բան, որ մենք համարեա ոչ մէկ տեղ չենք գտնում հայ թագաւորների դամբարաններ, ի բաց առեալ Սանահինը, ուր կան երկու թագաւորների շիրիմներ, որոնցից մէկը առանց տապանաքարի։ Այդ բացատրվում է նրանով, որ մեր թշնամիները, օրինակ՝ պարսիկները, կողոպտում էին թագաւորների շիրիմները։ Այդ արվել է այն հասկացողութեամբ, որ սրբերի նշխարներից զրկվելով՝ մարդիկ զրկվեն նախորդներից ժառանգած քաջութիւնից և բաղդից, յաղթութիւններ, որոնք խլված ոսկորների հետ կանցնէին թշնամուն։ Այդպէս էին մտածում ժամանակակից հայերը, որովհետև գաղթելիս նրանք հանում էին թագաւորների նշխարները և միասին տանում։ Պարսիկները կողոպտեցին Դարանաղեաց Անի բերդը, որտեղ ամփոփված էին Արշակունի թագաւորների շիրիմները, և գերեցին արքաների ոսկորները*)։

Աշտարակում ճաշը անցաւ փառաւոր կերպով. ճառախօսութիւններ, երգեր, ցնծութիւններ և այլն։ Սեղանի կառավարիչն էր Կարապետ եպիսկոպոսը։ Խօսեցին կառավարիչը, Բաբգէն վարդապետը, պ. պ. Մալխասեանց, բժ. Աղասարեան, աշակերտուհիների կողմից երկուսը՝ մէկը Յովնանեանից, իսկ միւսը Աշտարակի դպրոցից. նոյնպէս խօսեց հոգաբարձու Սուքիասեանը, Եփրեմ սրբազանի եղբայրը։ Ճաշից յետոյ տեղիս հարուստ Փալվանեանը բոլորին հրաւիրեց իր տունը թէյի։ Տան ընդարձակ պատշգամբում պատրաստված էր չքեղ սեղան զանազան մրգերով, խաղողով, գաթայով և այլն։

Վայելելով տանտիրոջ առատ հիւրասիրութիւնը, այցելեցինք գիւղում գտնվող Ծիրանաւորի վանքը, մի աւերակ, որը շատ հին ժամանակվայ մնացորդ է և որը բացի աղօթատեղի լինելուց՝ ծառայել է իբրև բերդ, ուր պատսպարվում էր ժողովուրդը վտանգի ժամանակ։ Այդտեղից գնացինք Էջմիածնի այգին, որտեղից բացվում է հրաշալի տեսարան դէպի Քասախ գետի մեծ և խոր ձորը։ Վերջապէս ժամը 5½-ին նստեցինք կառքերը և խմբական երգերի տակ ճանապարհվեցինք դէպի Էջմիածին։ Ճանապարհին Օշականի մօտերքը հանրակառքերից մէկը քիչ մնաց վայր գլորվէր անդունդը. բարեբաղդաբար ամեն ինչ անցաւ անվտանգ։ Երեկոյեան ժամը 8-ին վերադարձանք Էջմիածին թեթև անձրևի տակ։ Այդ երեկոյ ճեմարանի ուսանողութիւնը հրաւիրեց աշակերտուհիներին մեզ բոլորիս հետ միասին թէյի։

Ուրախութեամբ ընդունեցինք հրաւէրը։

---

*) Տես «Մշակ» №№ 171 և 172։

*) «Ազգագրական նիւթեր Փաւստոս Բիւզանդացու հայոց պատմութեան մէջ». Մ. Մատենճեան, 1913 թ.։

թիւնը մթագնելու նպատակով, զանազան կոչերով, որոնք վերագրվում են օտար զօրքերի իշխանութիւններին, լեհերին խոստանում են պատերազմից յետոյ շատ բարիքներ, խոստանում են ազատութիւն։ Այդպէս են վարվում անգամ լեհական յայտնի կազմակերպութիւնները, որոնք իրանց ջերմութեան և խանդավառութեան մէջ կորցրել են իրենց առողջ կշռադատելու ընդունակութիւնը։

«Մի ենթարկվէք այդ խոստումների ազդեցութեան։ Ներս խուժող և ոչ մի զօրք ժամանակ չէ կռուել Լեհաստանի համար։ Իւրաքանչիւրը կռւում է բացառապէս իր պետութեան շահերի համար, և այդ պետութիւնները մեր մասին չեն էլ հոգում։

«Նրանք միայն կամենում են այս կրիտիկական րոպէին օգտագործել լեհերին իրանց նպատակների համար, և կոյր ցնորաբան է հանդիսանում նա, ով ձեզ ասում է, թէ Աւստրիան Պրուսիայի դաշնակցութեամբ ձգտում է վերականգնել Լեհաստանը։

«Աւստրիայի և Գերմանիայի յաղթանակի հետևանք կարող է լինել Լեհաստանի կատարեալ բաժանումը և մեր ժողովրդի առաւել բաժան-բաժան լինելը։

«Ականջ մի դնէք գայթակղիչներին և հանգիստ եղէք, շրջահայեաց ու կայուն ամեն տեսակ գայթակղութիւնների հանդէպ։ Այս պատերազմի բոլոր ժամանակ լեհական թագաւորութիւնը հաւանական է, որ թշնամու կամ որևէ ժամանակաւոր յաղթողի զօրքերի տեղափոխութեան վայր լինի, մի յաղթողի, որը առաջին պատահած քաղաքում կամ գիւղում իրան նոր տէր է հռչակելու։ Այնուհետև իշխանութիւնները կը փոխվեն։ Այսպէս կարող է պատահել պատերազմի ընթացքում շատ անգամ։

«Ամեն մի չը մտածված քայլ յաջորդում է վրիժառութիւն։ Ամենից առաջ իմացէք, որ շատ բանով կարելի է օգնել Լեհաստանին, եթէ դուք մնաք ներկայ դրութեան մէջ։ Յանուն բարեմտութեան, յանուն դէպի հայրենիքն ունեցած սիրոյ, յանուն ժողովրդի ապագայի հոգատարութեան աղաչում ենք ձեզ՝ խուլ մնացէք դէպի ամեն տեսակ կոչեր, անխորտակելի ձեր վճռի մէջ, որ երկրի ապագան չը հասցվի աւելի մեծ անբաղդութեան և սարսափելի ու աննախատեսելի աղէտի»։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՕՐՔԸ

Անկասկած է, որ ներկայ միջազգային պատերազմում անգլիական զօրքին վերապահված է որոշ դեր։

Հետևաբար հետաքրքրական է ծանօթանալ Մեծ-Բրիտանիայի ցամաքային ույժերի հետ։

Անգլիան ունի երեք զօրք. արշաւող (էքսպէդիցիօն), մայր-երկրային (տէրրիտօրիալ) և հնդկական։ Տէրրիտօրիալ զօրքը կարող է պատերազմական գործողութիւնների մեկնել Անգլիայի սահմաններից դուրս միմիայն նրա պաշտօնեաների համաձայնութեամբ, որովհետև այդ զօրքը նշանակված է բացառապէս ներքին ծառայութեան համար։ Իսկ հնդիկ զօրքը Եւրոպա տեղափոխելու համար շատ ժամանակ է հարկաւոր։ Այդպիսով, միայն այսպէս կոչված «էքսպեդիցիօն զօրքը», որ խաղաղ ժամանակ պահվում է լիակատար ռազմավիճակում, կարող է ամենակարճ ժամանակաշրջանում ուղարկվել Լամանշի կամ Հիւսիսային ծովի իւրաքանչիւր նաւահանգիստը։ Ահա հէնց այդ զօրքն է, որ ներկայ րոպէին մասնակցում է պատերազմական գործողութիւններին ընդդէմ գերմանացիների՝ Բելգիայում։

Էքսպեդիցիօն զօրքը, համաձայն 1913 թ. պաշտօնական տուեալների, բաղկացած է 6 հետևակ զօրաբանակից, 1 հեծեալ զօրաբանակից, 3 հեծեալ գումարտակից և այն զօրքերից, որոնք անմիջապէս ենթարկված են զօրահրամանատարին։ Հետևակ զօրաբանակը բաժանվում է 3 գումարտակի և բաղկացած է 12 հետևակ բատալիօնից, 2 վաշտ հեծեալ զօրամասից, 9 դաշտային հրետանից, 3 գաուբիցային հրետաններից, 1 ծանր տեսակի արտիլէրիայից, 2 սապեօրների և 1 հեռագրական վաշտերից։ Պատերազմական ժամանակ իւրաքանչիւր զօրաբանակ բաղկացած է 18,075 զինուորից, 76 թնդանօթից և 24 գնդակացիրներից։ Հեծելազօրը ունի 4 բրիգադա, բաղկացած 36 էսկադրօնից, 4 հեծեալ հրետանից, նոյնքան հեռագրական գնդերից, որ ընդամենը կազմում են 9400 զինուոր 24 թնդանօթով և նոյնքան գնդակացիրով։ Հեծեալ բրիգադան բաղկացած է 2200 զինուորից 6 թնդանօթով ու նոյնքան գնդակացիրով։

Զօրահրամանատարին անմիջական ենթակայ զօրքը բաղկացած է 6000 մարդուց, 8 դաշտային ու 70 պաշարողական թնդանօթներից։

Այդպիսով անգլիական կանօնաւոր էքսպէդիցիօն զօրքը ունի ընդամենը մօտ 130,500 մարդ, 578 թնդանօթ և 186 գնդակացիր։

Պէտք եղած դէպքում, Անգլիան կարող է ուղարկել նաև պահեստի գնդեր, թւով մօտ 37,500 հոգի, 102 թնդանօթով և 62 գնդակացիրով։

Անգլիական զօրքի մէջ ուժեղ հեծելազօրը, մանաւանդ գեղեցիկ արտիլէրիայի ներկայութիւնը նրան ահագին գերակշռութիւն են տալիս։ Անգլիական դաշտային թնդանօթը, ինչպէս յայտնի է, անհամեմատ լաւ է գերմանականից և կարող է իւրաքանչիւր րոպէում կրակել 30 անգամ, մինչդեռ գերմանականը կարող է կրակել մօտ 20 անգամ։

ՃԱՊՕՆԱԿԱՆ ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Առաջ ենք բերում Ճապօնիայի՝ Գերմանիային ներկայացրած ուլտիմատումի բովանդակութիւնը.

«Ներկայ ստեղծված դրութեան ժամանակ, խիստ կարևոր և անհրաժեշտ համարելով միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու ամեն մի հնարաւոր առիթ, որ կարող է խախտել Հեռաւոր-Արևելքի խաղաղութիւնը, և պահպանել Ճապօնիայի և Անգլիայի ընդհանուր շահերը, որոնք բղխում են նրանց համաձայնութիւնից, նոյն կարգը հաստատել Արևելեան-Ասիայում, ճապօնական կայսերական կառավարութիւնը իր պարտքն է համարում յայտնել գերմանական կայսերական կառավարութեան՝ վերջինիս կողմից երկու միջոց ընդունելու անհրաժեշտութեան մասին.

«1) Անմիջապէս հաւաքել ճապօնական և չինական ջրերից Գերմանիայի բոլոր զինված ույժերը, այն է՝ զինուորներ և ռազմական նաւեր կամ այդպիսիք անմիջապէս զինաթափ անել։

«2) Ոչ ուշ քան 1914 թ. սեպտեմբերի 15-ը ճապօնական իշխանութիւններին յանձնել Կիօ-Չաօ ողջ շրջանը առանց որևէ վարձատրութեան կամ կոմպենսացիայի, որ ենթադրվում է Չինաստանին յանձնել.

«Ճապօնական կայսերական կառավարութիւնը յայտնում է, որ նշանակված ժամանակին, մինչև օգոստոսի 10-ը (23), գերմանական կայսերական կառավարութիւնից պատասխան չը ստանալու դէպքում՝ Ճապօնիան հարկադրած կը լինի բոլոր միջոցները ձեռք առնել, որոնք կը պահանջվեն իրերի դրութիւնից»։

ՎԻԼՀԷԼՄ II-Ի ԼՐՏԵՍԸ

Նոր, ճնշող ապացոյցներ են պարզվում այն բանի նկատմամբ, որ Գերմանիան, չը նայած նրա կառավարիչների և դիպլոմատների հաւաստիացումներին խաղաղութեան մէջ, նախօրօք է վճռել ներկայ պատերազմը։

Այսպէս, անցած յունիսի 14-ից մինչև 23-ը, յայտնի Կրուպպի թնդանօթների ֆիրմայի գլխաւոր ներկայացուցիչ ֆօն-Ռօլլէն ճանապարհորդութիւն է կատարել Անգլիայում և Շոտլանդիայում, այցելել է Բիրկենհեդ, Բարօու, Գլազգօ, Նիւկեսըլ և Շէֆֆիլդ։

Որպէսզի այդ ճանապարհորդութեանը իւրատեսակ «ուրախ զբօսանքի» բնոյթ տըրվի, ֆօն-Ռօլլէնը իր հետ էր վերցրել կնոջը, Կրուպպի գործարանատէրի ժառանգուհիներին, որոնք յայտնի են «թնդանօթների թագուհիներ» անունով։ Բացի կնոջից, ֆօն-Ռօլլէնին ուղեկցում էին Կրուպպի գործարանի աւագ ինժեներ Ֆրինցբերգէն և կայսերական նախկին կանցլէր Բիւլօվի բարեկամներից մէկը, որը նոյն ազգանունն է կրում և Կրուպպի Լօնդօնի ներկայացուցիչն է հանդիսանում։

Անգլիայում, ֆօն-Ռօլլէնի զբօսանքի ժամանակ, այդ պարոնները այցելում էին Լէրդի, Վէրտի, Վիկէրսի, Արմստրօնգի, Ուայտվօրտի, Կոուէլլի և ուրիշների ձեռնարկութիւնները։

Նախ քան իր Անգլիա գնալը՝ ֆօն-Ռօլլէն մի շրջաբերական-նամակով դիմել էր այդ ֆիրմաների վերատեսուչներին։ Նամակը գրված էր բարեկամական արտայայտութիւններով, և որի մէջ ֆօն-Ռօլլէնը մատնանշում է այն հետաքրքրութեան վրա, որ իր համար կը ներկայացնէր Անգլիայի նաւաշինարանների և զինաշինարանների համեմատութիւնը գերմանական այդպիսի գործարանների հետ։

Այդօրինակ ճանապարհորդութիւնը ինքն ըստ ինքեան մի քիչ տարօրինակ էր թւում, բայց աւելի տարօրինակ էր այն բանը, որ ֆօն-Ռօլլէնը, իր շրջագայութիւնը հազիւ վերջացրած, շտապեց Կիլ, Վիլհէլմ կայսրի մօտ, որը այդ ժամանակ պատրաստվում էր ամենայն հանդիսաւորութեամբ ու յարգանքով դիմաւորելու անգլիական ծովակալ սըր Ջօրջ Ուօրէնդէրին։

Գերմանական ծովային մինիստր ֆօն-Տիրպից այդ ժամանակ նոյնպէս գտնվում էր Կիլում, անհամբերութեամբ սպասելով կայսերական լրտեսի «ուրախ» ճանապարհորդութեան հետևանքներին։

Երբ մի թերթի ներկայացուցիչ դիմեց ֆօն-Ռօլլէնին, ինտերվիւ խնդրելով նրա Անգլիայում կատարած ճանապարհորդութեան առիթով, նրան այդ ժամանակ, Սարաժվօյի սպանութեան հէնց նախօրեակին, ներկայացաւ ֆօն-Ռօլլէնի քարտուղարներից մէկը և չափազանց սիրալիր կերպով յայտնեց, որ Կրուպպի գործարանների ղեկավարի Անգլիայում կատարած ճանապարհորդութիւնը այնպիսի բնաւորութիւն չունի, որ կարելի լինի մամուլում գրել։

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ՖՐԻԴՐԻԽ-ՎԻԼՀԷԼՄ

Գերմանական գահաժառանգ Ֆրիդրիխ-Վիլհէլմ զարմանալի տաղանդ ունի թշնամիներ շահելու։ Ողջ Գերմանիայում չը կայ առաւել անժողովրդական մարդ, քան Ֆրիդրիխ-Վիլհէլմը, չը նայած այն բանին, որ նա ամեն հնարաւորութիւն գործ է դրել իր ապագայ հպատակների համակրութիւնը գրաւելու։ Գահաժառանգը իր վարքի մէջ անտակտութիւն էր մտցնում յաճախ։ Բաւական էր, որ Վիլհէլմ II-ը որևէ մէկին հեռացնէր իր պալատից, գահաժառանգ Ֆրիդրիխ-Վիլհէլմը իսկոյն հազար տեսակ ողորմածութիւններ կը թափէր հեռացվածի գլխին։

Գահաժառանգը վաղուց արդէն երազում էր եւրօպական պատերազմի մասին։ Կայսրի կանցլէր Բեթման-Ֆօն-Հօլվէգ շատ գեղեցիկ կերպով իրան հաշիւ էր տալիս այն բանում, որ պատերազմի անյաջողութեան ժամանակ գերմանական կայսրութեան պետական նաւը կարող է կատարեալ խորտակում կրել։ Այդ պատճառով գահաժառանգը ատում էր կանցլէրին իր հոգու ամբողջ ույժով։ Պատերազմից մի քանի օր առաջ, Ֆրիդրիխ-Վիլհէլմը մի հեռագիր էր ուղղել Պօզնանի պրոֆեսոր Բուխհօլցին, որ հանդիսանում է պրուսական հակալեհական հզօր կազմակերպութեան աչքի ընկնող անդամներից մէկը, որոնք անխնայ պատերազմ են յայտարարում լեհ ազգաբնակութեան։ Այդ հեռագրի մէջ գահաժառանգը կանցլէրին անուանել է «ոչնչի անընդունակ փալաս»։

Գերմանական գահաժառանգի անտակտութեան ամենալաւ ապացոյց ծառայում է հետևեալ պատմութիւնը։

Մօտ չորս շաբաթ առաջ գահաժառանգը գտնվում էր Բեռլինի անգլիական նախկին դեսպան Գօշէնի մօտ։ Դեսպանի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ գահաժառանգը խիստ կերպով իր համոզմունքն է յայտնել այն բանում, որ բոլոր զինուորական կցորդները իրանց կառավարութիւնների համար զինուորական լրտեսների պարտականութիւն են կատարում։ Այդ խօսակցութեանը ներկայ էր Բեռլինի անգլիական զինուորական կցորդը։ Անգլիական լրագիրները արձագանք տուին այդ բանին և աւելացրին հետևեալ կօմենտարիան. «Եթէ Վիլհէլմ կայսրը գոնէ փոքր ինչ թանկ է գնահատում Անգլիայի հետ ունեցած իր բարի յարաբերութիւնները, նա պէտք է իր որդուն խրատական դաս տայ, թէ՝ այդպիսի բաներ չեն խօսում անգլիական զինուորական կցորդի ներկայութեամբ»։

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Ապրել եմ Գերմանիայում,
Բայց սիրել Ֆրանսիան.
Ուսել եմ Գերմանիայում,
Բայց ոգևորվել Ֆրանսիայով։

Համաեւրօպական արիւնահեղ դրամայի ամենաուշագրաւ ակտը կազմում են այն տեսարանները, ուր մենամարտիկ դերակատարներ հանդիսանում են Ֆրանսիան և Գերմանիան։

Ազգային-պատմականօրէն և սօցիալ-քաղաքական տեսակէտից վերին աստիճանի նշանակալից է այդ զուգադիպումը։

Մարտընչող ախոյեաններից ոչ ոք այնքան դառնացած չէ և հակընդդէմ տրամադրված, որքան Ֆրանսիան ու Գերմանիան իրար դէմ։ Ոչ մի տեղ «ազգային» հակակշիռ հաշիւները, պատմական անտագօնիզմը այնքան խոշոր չեն եղել, քաղաքական ազդեցութիւնների հակադիր շփումները այնքան ցայտուն չեն եղել, ռազմական ույժերի հակշիռ բաղխումները այնքան ուժեղ ու վճռական չեն եղել, որքան Ֆրանսիայի և Գերմանիայի միջև։

Անգլիան և Ռուսիան եղել են պատմական անցեալում ոչ միայն բարեկամական, այլև դաշնակցական յարաբերութեան մէջ Գերմանիայի (աւելի ճիշդ՝ գերմանական երկրների), ինչպէս և Աւստրիայի հետ ընդդէմ ընդհանուր թշնամու։ Յիշենք թէկուզ եւրօպական միապետութիւնների խոշոր կօալիցիօնը՝ Ֆրանսիայի քաղաքական ծանր երկունքի մեծ օրերին (1789—1793 թ.), ուղղված գաղղիական «կարմիր ուրուականի» ճակատագրական սարսափների դէմ։ Յիշենք Մեծ Բօնապարտի աշխարհակալութեան վերջին կրիտիկական շրջանը, երբ ողջ Եւրօպան՝ Ռուսիայի, Անգլիայի, Պրուսիայի և Աւստրիայի գլխաւորութեամբ կազմ ու պատրաստ ծառացել էր կղզիացած Ֆրանսիայի դէմ։

Հապա ցոյց տուէք պատմական թէկուզ մի կարճատև շրջան, երբ Ֆրանսիան ու Գերմանիան սերտ դաշնակցական յարաբերութեան մէջ եղած լինէին։

Ֆրանս-գերմանական աւանդական հակամարտութեան փորած անջրպետը աւելի ու աւելի էր խորանում, քանի սրվում ու վճռական էր դառնում այն հարցը, թէ ով պիտի ստանձնէր հեգեմօնիան Միջին Եւրօպայում։ Ֆրանս-պրուսական պատերազմը (1870—71 թ.) լուծեց այդ հարցը։ Բիսմարկեան Գերմանիան ոչ միայն վերականգնեց «դարերով սանահարված ազգային պատիւը», այլև քաղաքական կօնցերտի ծանրակէտը վերջնականապէս Պարիզից փոխադրեց Բեռլին։ Սակայն դա հարցի լուծումն էր նշանակում սոսկ գերմանական շահերի իմաստով։ Ֆրանսիական տեսակէտից, ընդհակառակը, նոր կնճռոտ պրօբլեմի ծայրն էր բացվում դրանով։

Նուաստացած Ֆրանսիան՝ իր արդէն ներքուստ ազատագրված վիճակով (հասարակապետական կազմով) անդառնալիօրէն նետվեց Ռուսիայի գիրկը դիւանագիտական հողի վրա։ Եւ որքան էլ Ռուսիայի աջակցութեամբ լուծելիք ռեվանշի հարցը կորցրել էր վերջին տասնամեակում իր սուր բնաւորութիւնը՝ շնորհիւ ֆրանսիական առաջնորդների (մանաւանդ Ժան Ժօրէսի) խաղաղարար և հաշտեցուցիչ պրօպագանդայի, այնուամենայնիւ ամեն մի հանրապետականի հոգու խորքում թաքնված մնաց վաղեմի բուլանժիզմից մի-մի վրէժխնդրական կայծ։

Ներկայ պատերազմը, եթէ վերջանայ նա Գերմանիայի անթերի պարտութեամբ, կունենայ անկասկած վերին աստիճանի նշանակալից բովանդակութիւն ամենից առաջ Ֆրանսիայի համար։ Նա նորից կը լուծէ ֆրանս-գերմանական լարված յարաբերութիւնների պրօբլեմը, բայց այս անգամ արդէն ֆրանսիական շահերի իմաստով։ Դրանով կը մաքրվի ոչ միայն Պարիզի ռմբակոծման «ազգային արատը», այլև բռնութեամբ յափշտակված Էլզաս-Լօթարինգիան կանցնէ իր իսկական տիրոջ ձեռքը։ Ոչ նուազ կարևոր, բայց անուղղակի հետևանքներից մէկն էլ կը լինի այն, որ յաղթանակող Ֆրանսիան կը ստեղծէ իր համար միանգամայն ինքնուրոյն դիրք դիւանագիտական յարաբերութիւնների մրցադաշտում։

Սակայն շահերի և ազդեցութիւնների նոր դասաւորութեան այս սառը քալքուլացիան չէ միայն, որ ակամայ ուշադրութիւն է գրաւում ներկայ պատերազմին մասնակցող յայտնի պատմական ախոյեանների փոխ-յարաբերութիւնները քննելիս։

Նա, ով ծանօթ է եւրօպական ազգերի քաղաքական կեանքի էվօլիւցիայի պատմութեան հետ և դաւանում է հասարակական կառուցուածքների բնահրաժեշտ յեղաշրջումների առաջադիմական տեսակէտը, անկարող է սառնութեամբ անցնել այնպիսի երևոյթի կողքից, որը հանդէս է բերում մեզ Ֆրանսիայի և Գերմանիայի նման երկրների ույժերի հրապարակական հաշւեկշիռը։ Դուք անկարող էք պարզապէս զսպել ու փակել ձեր համակրանքների ու հակակրանքների զգացմունքները, եթէ մանաւանդ խօսում ու գրում էք հրապարակախօսի դերում։

Ֆրանսիա և Գերմանիա…

Մէկը քաղաքական կեանքի յարաճուն էվօլիւցիայի իդէալական հայրենիքն է. միւսը քաղաքական կեանքի սառը, երբեմն դանդաղաշարժութեան և յետամնացութեան դասական երկիրն է։

Առաջինը սօցիալ-քաղաքական որոտընդոստ ակտերի ազատագիր մարտիկն է ողջ Եւրօպայում, երկրորդը՝ ռէակցիայի և դրագօնական ճնշումների հաստաբազուկ ժանդարմը, կալիտ սօլդատն է եղել Միջին-Եւրօպայում։

Մէկը աւետել է համայն մարդկութեան իրաւական ազատագրութեան անմահ իդէաները, քաղաքացիական ազատութիւնների վեհ սկզբունքները. միւսը արմատի մէջ խեղդել ու ջնջել է աշխատել ժողովրդական շարժման ու ազատագրութեան ամեն մի տարրական ձգտում։

Մէկը եղաւ առաջինը մեծ ազգերի մէջ, որ քաղաքական աբսօլիւտիզմի անօրինակ զարգացման ամենաբարձր գագաթնակէտից վայր իջաւ և իրականացրեց առաջնակարգ դեմօկրատիայի քաղաքական բաղձանքը՝ հանրապետական սիստեմը. միւսը եղաւ եզակի օրինակը, որ մինչև այսօր էլ անվթար պահպանեց Արևմտեան Եւրօպայի սրտում կիսաաբսօլիւտիստական մի րէժիմ՝ միջնադարեան ֆէօդալականութեան (իւնկերթումի) կանգուն կոթողներով։

Հետևապէս առաջինը (Ֆրանսիան) մի լուսաւոր աստղ է, մի օրինակելի տիպար, որի անցած ու աւարտած քաղաքական կուրսերը պիտի աւարտեն դեռ յետոյ եւրօպական միւս երկիրները. իսկ երկրորդը (Գերմանիան) մի խոց է, մի ժահրոտ, փտած վէրք Արևմտեան Եւրօպայում, որի արդիկացութեան տապալումը՝ փայփայած իղձը պիտի լինի ամեն մի առաջադէմ, դեմօկրատիկ մտածողի։

Ահա ինչ են ներկայացնում Ֆրանսիան ու Գերմանիան իրանց քաղաքական էութեամբ, իրանց պատմական դերով։

Ասացէք, կարելի է անտարբեր լինել դէպի Ֆրանսիան. կարելի է չը սիրել այդ նուիրական երկիրը, քաղաքական մետամօրֆօզների այդ մշտական աւետաբեր հայրենիքը։ Կարելի է չոգևորվել ֆրանսիական ասպետ, ի բնէ վառվռուն, անդադար առաջխաղաց ժողովրդով։

Եւ այդպիսի մի երկրի դէմ կեանքի ու մահվան կռիւ է մղում այժմ ընդ միշտ բոլորից ատված պաշտօնական Գերմանիան։

Ռամկավար հանրապետութեան դէմ սուր է բարձրացրել ռէակցիօնէր միապետութիւնը։ Միթէ կարող է խօսք լինել օբիեկտիվ դի-

---

Գնացինք ճեմարանի դահլիճը. այնտեղ էր սեղանատունը, ուր պատրաստվել էր թէյ, զանազան չոր մրգեր և այլն։ Ուսանողները աշխատում էին ամեն կերպ զբաղեցնել օրիորդներին, և փոխադարձաբար։ Երկու կողմից եղաւ երգեցողութիւն. մի խօսքով՝ հիանալի ժամանց, որը տևեց մինչև ժամը 11-ը, երբ մենք շնորհակալութիւն յայտնելով թէ ճեմարանի վերատեսուչ Բագրատ եպիսկոպոսին և թէ ուսանողութեանը՝ վերադարձանք հիւրանոց։

Ամսի 12-ին, շաբաթ օրը, հոգեհանգիստ էր կատարվում Վեհափառի քրոջ յիշատակին մայր եկեղեցում. բոլորս ներկայ էինք պատարագին, ուր կար ամբողջ միաբանութիւնը։

Երգեցողութիւնը միաձայն էր և ոչ կանոնաւոր, որ բացատրվում է նրանով, որ երգեցողութեան ուսուցիչը բացակայ էր, որի հետ և շատ աշակերտներ՝ տօների պատճառով։ Մեզ պատմեցին, որ Էջմիածնում կայ շատ լաւ քառաձայն երգեցիկ խումբ. ուրիշ կերպ էլ լինել չէր կարող, որովհետև Մայր Տաճարը, որտեղ այցելում են թէ հայեր՝ զանազան տեղերից՝ և թէ օտար այցելուներ, պիտի ունենայ օրինակելի երգեցիկ խումբ և առ հասարակ օրինակելի եկեղեցական արարողութիւն։

Պատարագից յետոյ այցելեցինք տպարանը, ուր ձուլարանում տառեր պատրաստելիս մի կտոր շիկացած արճիճ ընկաւ մէկ օրիորդի աչքի եղջրաթաղանթը։ Ինչպէս վերև գրեցինք, ես և վանքի բժիշկ Գափամաճեանը հանեցինք այդ կտորը՝ նշանակելով և հարկաւոր դեղօրայք։ Բարեբաղդաբար աչքը չը վնասվեց։

Վերջին ճաշը ունեցանք հիւրատանը, ուր մեր տեսուչը բոլորիս կողմից յայտնեց խորին շնորհակալութիւն հիւրընկալ հայր սուրբին, որը մի առանձին պատրաստակամութեամբ հիւրասիրութիւն ցոյց տուեց թէ մեր աշակերտութեան և թէ նրան ուղեկցող անձանց։

Ժամը 3-ին ճանապարհ ընկանք դէպի կայարան, երախտագէտ հրաժեշտ տալով Էջմիածնին, մեզ ճանապարհ ձգող Բագրատ և Կարապետ եպիսկոպոսներին, Բարգէն և հիւրընկալ վարդապետներին, նոյնպէս և ուսանողութեանը։ Նստեցինք կառքերը. Վաղարշապատի միջով անցնելիս՝ օրիորդները զմայլելի ձայնով երգեցին «Էջմիածին»։ Ճանապարհը Էջմիածնի և կայարանի միջև, անձրևների պատճառով, շատ վատ էր, մանաւանդ Թուրք Կարխան գիւղում, ուր շատ տեղեր լճերով էինք անցնում։ Կայարանում աշակերտուհիները և մենք տեղաւորվեցինք յատուկ վագօնում, որը կցված էր Երևանից։

Ամբողջ ճանապարհին երգ և ուրախութիւն էր։

Վերջապէս ամսի 13-ին, կիրակի, ժամը 11-ին հասանք Թիֆլիսի կայարանը և տեսչի հսկողութեամբ ցրվեցինք մեր տները։

Այսպէս վերջացաւ մեր էքսկուրսիան, որը տևեց ամսի 7-ից մինչև 13-ը։

Չաջողվեց ծրագրի մէկ մասը ևս իրագործել, մտնել վերադարձին Անի, որովհետև եղանակը վատ էր։

⁂

Մեր վերոյիշեալ, թէև ոչ լրիւ նկարագրութեամբ Մարիամեան-Յովնանեան միջնակարգ դպրոցի VIII դասարանի ընթացաւարտ աշակերտուհիների ճանապարհորդութիւնը միանգամայն աջող կարելի է համարել։ Ճշմարիտ է, ամբողջ ծրագիրը եղանակի անաջողութեան պատճառով անկարելի եղաւ իրագործել, տեսնել և Անին, բայց և այնպէս աշակերտութիւնը տեսաւ շատ հետաքրքրական վայրեր, պատմական յիշատակարաններ, հրաշալի բնութիւն և այլն, որոնք՝ աշակերտութեան ասելով՝ անմոռանալի տպաւորութիւն թողեցին իրանց վրա, մանաւանդ որ այդ անունները նրանց ծանօթ էին գրքերից և դասարանում անցածից։

Ես կարծում եմ, որ ամենաօգտաւէտ ճանապարհորդութիւնը մեր երկու սեռի աշակերտութեան՝ վերոյիշեալ էքսկուրսիայի ծրագիրը կարելի է համարել թէ ազգային և թէ գեղարուեստական տեսակէտից, մանաւանդ որ թէ Վեհափառ Կաթողիկոսը, թէ միաբանութիւնն ու ճեմարանը և թէ հայ գիւղացիութիւնը մի առանձին սէր և հիւրասիրութիւն են ցոյց տալիս դէպի այդպիսի ճանապարհորդութիւնները, երբ մեր մատաղ սերունդը գալիս է մեր պատմական յիշատակարանները աչքով տեսնելու, մեր գիւղացիութեան նիստ ու կացին ծանօթանալու, մեր բարձրագոյն ճեմարանը դիտելու և նրա աշակերտութեան հետ ծանօթանալու և այլն։

Ես քանիցս եղել եմ Էջմիածնում, Երևանում և այլն, բայց երբէք այնպէս չէի կարողացել ծանօթանալ նրանց հետ, ինչպէս ներկայ էքսկուրսիայի ժամանակ, որովհետև այս անգամ ամեն յարմարութիւն և ամեն տեսակ ծանօթութիւն տրվում էր միաբանութեան կողմից, որտեղ գտնվում են և գիտնական անձնաւորութիւններ, որոնք ամեն մի շրջագայութեան ժամանակ ամենամեծ պատրաստակամութեամբ բացատրում են այն ամենը, որ հետաքրքրական է, կրթիչ է և այլն։

Մենք ուրախութեամբ դիտում էինք, թէ ինչպէս աշակերտուհիները իրանց տետրակներում նշանակում էին՝ ինչ որ տեսնում և լսում էին թէ Էջմիածնում և թէ Զուարթնոցում, ինչպէս և Օշականում ու Աշտարակ գիւղերում, նպատակ ունենալով գրել յիշատակարան այդ ճանապարհորդութեան մասին՝ Թիֆլիս վերադառնալուց յետոյ։ Կրկնում ենք. տպաւորութիւնները աշակերտութեան վրա անջնջելի էին, կրթիչ, էսթետիկ և, ինչպէս աշակերտուհիները ասում էին, անմոռաց։

Այդ ամենը, կարծում եմ, աւելի ցայտուն կերպով կերևայ, երբ աշակերտութիւնը ինքը իր տպաւորութիւնները, իր զգացմունքները արտայայտի գրաւոր կերպով իր յիշատակարանում, ինչպէս խոստացել է։

Բժ. Բ. Աղասարեան

(Վերջ)

տողների վերաբերմունքի բնաւորութեան մասին...

Անգամ առաջին կայսերական Ֆրանսիան մի դար առաջ (Նապոլէոն I-ի օրով) իր ռէժիմով բարձր էր ներկայ կայսերական Գերմանիայից, ուր մնաց հանրապետական Ֆրանսիան։

Կորսիկացի մեծ աշխարհակալը, ժակոբէնների այդ երբեմնի յեղափոխական գեներալը, իր բռնապետական բոլոր սարսափներով հանդերձ, ունէր մի անուրանալի առաւելութիւն. նա ստեղծում ու պահպանում էր ամենուրեք ֆրանսիական մեծ յեղափոխութեան աւանդած հիմնական սկզբունքները։ Պրուս-յունկերական ռէակցիան, ընդհակառակը, ճիգեր է թափում անգամ սեփական հայրենիքում ետ մղել պատմութեան անիւը և 50-ական թուականների տխուր շրջանը վերականգնել։

Ֆրանսիայում քաղաքական սիստեմի աստիճանական ռամկավարացումը յանգեց հանրապետական կազմին. Գերմանիայում պրուսական ռէակցիան ստանձնեց քաղաքական մեխանիզմի հեգեմոնիան և ողջ պետութիւնը դարձրեց միլիտարիստական միակուռ մոնարխիա։

Ահա ովքեր են մարտնչում այժմ իրար դէմ համաեւրոպական պատերազմի թատերաբեմում։

Թող յաղթանակէ ֆրանսիական հանրապետութիւնը. թող խորտակվի և ընդ միշտ կորչի գերմանական ռէակցիոնէր կայսրութիւնը, վամպիր միլիտարիզմը։

Այս պիտի լինի բացարձակ լօզունգը բոլոր ազատասէրների և առաջադէմների։

B. Lucifer

ԹՌՈՒՑԻԿ ՄՏՔԵՐ

VI

Եւ Եւրոպան էլ սարսված զինվում էր, հետևելով գերմանական պետական սկզբունք դարձած՝ հռոմէական հին կանոնին՝ si vis pacem para bellum (եթէ ուզում ես խաղաղութիւն, պատրաստվիր պատերազմի)։ Այս խնդրում նա մինչև իսկ չը հաշտվեց իր պապի ու հօր թագաւորութեան և եւրոպական քաղաքական համերգի առաջին դիրիժեօր՝ Բիսմարկի հետ, և սա ի զարմանս ամբողջ Եւրոպայի հրաժարական տուեց և հեռացաւ քաղաքական ասպարէզից։

Այսպիսով զօրքը և զինւորական ոյժը Վիլհէլմի համար դարձաւ մի կուռք, որին խունկ էր ծխում և պաշտում միայն։ Սակայն ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ։ Գերմանական զինւորութիւնը դարձաւ ինքնահաւան, ամբարտաւան, զէնքը և զինւորական ոյժը ամեն բանից բարձր դասող, իրան համարող անյաղթելի ու շատ բարձր շրջապատից։

Զինւորականութեան մէջ ձեւապաշտութիւնը և սարկական հնազանդութիւնը տիրապետեց։

Բաւական էր, որ հասարակական տեղում մի օֆիցերի աննկատելի կերպով դիպչէին, կամ հրէին, որ նա անմիջապէս այն աշխարհը ուղարկէր իր պատիւը վիրաւորողին։

Այսպիսի օրինակներ շատ են եղել, հենց վերջերս տեղի ունեցան Ցաբէրնի դէպքերը, երբ մի լպիրշ օֆիցէրի (Ֆօրստնէր) հրամանով գնդակահարվեցին խաղաղ քաղաքացիները։

Դատարանում հաստատվեց այդ օֆիցէրի կատարած սոսկալի յանցանքը, սակայն նրան միմիայն տեղափոխեցին մի այլ զօրաբանակ ծառայութեան. ոչնչով չը տուժեց, իսկ թագաժառանգն էլ հեռագրով խրախուսեց և շնորհաւորեց նրա կատարած սխրագործութիւնը։

Սարսափելի մերկացումներ են արել ռէյխստագում սօցիալ-դեմոկրատ պատգամաւորները զօրքի մէջ տեղի ունեցող ծեծի, ամենազազրելի արարքների մասին, որոնք, զինւորականների կարծիքով, իբր թէ զինւորական կարգապահութեան և անպայման հնազանդութեան նշաններ են։ Օրինակի համար՝ լիզել տալ զինւորին քրտինքից թաց եղած գուլպանները, մարդկային արտաթորութիւնները ստիպել բերան առնել և այլ զզուելի արարքներ։

Գերմանական զինւորականութեան ոգի ու կեանք ներշնչողը՝ ինքը Վիլհէլմը զերծ չէ էքսցենտրիկ արարքներից. նա և կայսր է, և քարոզիչ, և պատարագիչ, իբրև բողոքական պաստոր, զինւորականների առաջ, և նկարիչ, և երաժշտագէտ, օպերէտներ կազմող. այն աստիճան տարված է լինում իր անհատականութեամբ, որ մոռանում է, թէ ովքեր են իրան շրջապատողները. բաւական է, երբ դրանք կոմսեր են կամ զինւորականներ։

Մի քանի տարի առաջ նրա մօտ մտերիմ անձինք էին կոմս Էյլէնբուրգ և այլ բարձրաստիճան զինւորականներ, որոնք բոլորն էլ հոմօսէքսուալ էին, կնատեաց և տղամարդասէր անհատներ։

Այդ ամենը մերկացրեց և հաստատեց դատարանում յայտնի ժուրնալիստ Մաքսիմիլիան Հարդէնը իր լրագրի մէջ։

Ահա այս տեսակ մթնոլորտի մէջ է գտնվում գերմանական զինւորականութիւնը, որին նրա ղեկավար Վիլհէլմը ներշնչել է միայն մի սկզբունք՝ «Գերմանիա, Գերմանիա, ամենից վեր», այսինքն ամեն ինչ ոտնատակ տալ, ամեն ինչ զոհաբերել, ամեն ինչ ներելի է ու թոյլատրելի, երբ այդ նպաստում է Գերմանիային ամենից բարձր լինելու։

Պարզ է, որ այդ բանի համար հարկաւոր է կոպիտ ոյժ. միմիայն ոյժի վրա յենված կարելի է ժխտել այլ ազգերի գոյութիւնն ու իրաւունքները, և ամեն ինչ զոհաբերել, ոչնչացնել մի կուռքի՝ Գերմանիայի փառքի համար։ Ահա այս քաղաքականութեան պտուղներն է, որ վայելում է այժմ Գերմանիան, որի միակ անկեղծ բարեկամը մնացել է միմիայն Թիւրքիան...

Գերման աշխարհի այս նոր չինգիզխանական արշաւանքին վերջ կը տայ մարդկութիւնը, որպէսզի մի անգամ և պարզ հասկանալի լինի գերման ժողովուրդների ղեկավարներին, որ արդարութեան, մարդկային գոյութեան տարրական սկզբունքները չէ կարող ոչ մի ոյժ խորտակել ներկայ հասարակակարգի մէջ։

Ա. Նազարեթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Երէկ երեկոյեան Թիֆլիս վերադարձաւ Կովկասի փոխարքայի ամուսին կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնա Վօրօնցով-Դաշկովան. իսկ այսօր գալիս է Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Իվ. Խատիսեանը։

Վերադառնում են այդ երկու յարգելի անձնաւորութիւնները Գերմանիայից, ներկայ րոպէին զուլումի երկիր դարձած այդ երկրից, հրաշքով ազատված նրա բարբարոս կառավարութեան ձեռքից...

Հեռագիրն ամեն օր նոր տեղեկութիւններ է բերում գերմանական սխրագործութիւնների մասին, որոնց ենթարկվեցին և ենթարկվում են պատերազմից յետոյ Գերմանիայում մնալու դժբաղդութիւնն ունեցած համարեա բոլոր այլազգիները առանց սեռի ու հասակի խտրութեան։

Եւ միայն պէտք է շնորհակալ լինել դէպքերի բարեյաջող զուգաւորութեան, որի շնորհիւ ողջ-առողջ վերադարձան մեր երկիր՝ Կովկասի ազգաբնակութիւնից սիրված ու յարգված կոմսուհին և Թիֆլիսի քաղաքագլուխ Ալէքսանդր Իվանիչը՝ անփորձ ազատվելով գերմանացիների քմահաճ իշխանութեան ինքնակամ դատաստանից...

Մասնաւորապէս Թիֆլիսի ազգաբնակութիւնը իր բազմատարր բնակիչներով ջերմ կերպով ողջունում է կոմսուհու և քաղաքագլխի վերադարձը։

Այսօր մենք ևս մեր անկեղծ ուրախութեան զգացմունքն ենք արտայայտում կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնայի և քաղաքագլուխ Խատիսեանի բարեյաջող վերադարձի առիթով և միախառնում ենք մեր ձայնը Թիֆլիսի ամբողջ ազգաբնակութեան սրտագին ողջոյնին։

Բարի վերադարձ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, երեկոյեան ժամը 8-ին, ժամանեց ստատս-դամա Ե. Ա. Վօրօնցովա-Դաշկովա։ Քաղ. վարչութիւնը, ազնուականութիւնը, մեշչանների և արհեստաւորների համայնքները հանդիսաւորապէս դիմաւորեցին կոմսուհուն։

◆ Որբերին և այրիներին օգնող ռուսական բարեգործ. ընկ. վարչութիւնը Ա. Ն. Միշլայեվսկայայի նախագահութեամբ՝ որոշել է սկզբում ճաշարան բացել 50 որբ երեխաների համար, իսկ յետոյ, եթէ միջոցները ներեն, բանալ և ապաստարան պատերազմում սպանվածների 50 որբերի համար։ Շաբաթ, օգոստոսի 16-ին, կայանալու է ընկ. անդամների ընդհանուր ժողովը, 1000 ր. պատերազմում սպանվածների այրիներին և որբերին (առանց ազգի խտրութեան) յատկացնելու առիթով։ Այդ պատճառով, անդամներին խնդրվում է ներկայ լինել։ Իւ. Մ. Թայիրովա պատերազմում վիրաւորվածների օգտին ընկ. ներկայացրել է 100 ր.։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնից հեռագրով կարգադրութիւն է ստացվել, որ համաձայն պահեստիների և երկրապահ զինւորների ընտանիքները իրանց հայրենիքը տեղափոխվելու են ձրի։ Մեկնողներին քաղ. կոմիտէտը նպաստ է տալու միայն ճանապարհի ուտելիքի համար։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտէտի նիստը նշանակված է ուրբաթ։

◆ Օգոստոսի 11-ին նահանգապետը այցելեց ոստիկանապետի դիւանատուն և ծանօթացաւ ոստիկանական պաշտօնեաների հետ։ Յետոյ մի համառօտ ճառով շնորհակալութիւն յայտնեց աւագ-թաղական վերակացուներին և աւագ-քաղաքապահներին նրանց այն օրինակելի կարգապահութեան համար, որ ցոյց են տուել զօրահաւաքի օրերին։ Այնուհետև նահանգապետը դիտեց ոստիկանական վարչութեան շէնքը։

◆ Քաղաքագլխի պաշտօնակատարը նահանգապետի միջոցով դիմել է Կովկասի զինւորական շրջանի զինւորական հաղորդակցութեան կառավարչին, խնդրելով կարգադրութիւն անել, որ մի գնացք իր կազմով ուղարկվի Փօթի՝ Թիֆլիսի համար ալիւր բերելու։

◆ Քաղաքագլխի պաշտօնակատարը իրաւասուներին նիստի է հրաւիրում հացի սակագինը քննելու։

◆ Քաղ. վարչութիւնը նահանգապետի հաստատութեանն է ներկայացրել մսի իջեցված սակագինը, որի համաձայն տաւարի միսը պէտք է ծախվի ֆունտը փոխանակ 15 կ.՝ 13 կոպէկով, ոչխարի միսը 16 կոպէկով՝ փոխարէն 18-ի։

◆ Թիֆլիսի կառապանները դիմել են քաղ. վարչութեանը՝ խնդրելով բարձրացնել կառքերի սակագինը, ի նկատի առնելով ձիերի կերի թանգութիւնը։ Քաղ. վարչութիւնը մերժել է այդ խնդիրը, որովհետև, նրա քաղած տեղեկութիւնների համաձայն, կերի գները մօտ են սովորական գներին և դեռ պէտք է իջեցվեն։

◆ Երկուշաբթի, օգոստոսի 11-ին, փոխարքայի օգնական հօֆմէյստէր Լ. Ն. Պետերսոնի մօտ կայացաւ մելիօրատիվ համագումար կազմակերպող բիւրօյի նիստը, որտեղ որոշվեց չը յետաձգել համագումարի գումարումը։

◆ Ստացանք Քամալեանց Ս. դպրի յօրինած «Յիսուսի կեանքը» կրօնի դասագիրքը, էջ 176, գինը 50 կ.։

ԿՈՎԿԱՍ

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Վ. Ա. Մօխեձէվին Բօրժօմում ռուսերէն լեզուով հրատարակել Պետ. Հեռ. Գործ. հեռագրերը։ Նոյնպիսի թոյլտուութիւն տուել է և Դ. Դ. Կարիչաշվիլին՝ Գօրում հեռագրեր հրատարակել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 օգոստոսի

Առևտրական տները ներկայ պատերազմից խիստ չարաչար կերպով են օգտվում։ Թանգացրել են կենսական ամեն տեսակի մթերքները։ Աւելի շատ և յամառօրէն թանգացրել է «Складъ Кавк. Т-во Торговли Аптекарскими Товарами» առևտրական տունը։

Նահանգապետի կարգադրութիւնը՝ մթերքները չը թանգացնելու մասին՝ որոշ չափով ազդել է ընդհանուր շուկայի վրա, բայց դեղատնային այդ շտեմարանի վրա բոլորովին չի ազդել։ Անվերջ բողոքներ կան յաճախորդների կողմից։

Հարցնում եմ.

— Դուք կարդացէ՞ք «Кавказъ»-ում ձեր դէմ տպված բողոքը։

— Да, читали, это никакого значенія не можетъ имѣть.

— Իսկ նահանգապետի կարգադրութիւնը ձեզ համար էլ չէ՞ արժեք։

— Э, господинъ, ничего не поможетъ; какъ намъ выгодно, такъ и продаемъ.

Եւ նրանց համար իսկապէս, ըստ երևոյթին, նշանակութիւն չունեն այն դժգոհութիւններն ու բողոքները, որոնք ամեն օր տեղում են նրանց գլխին։ Եթէ մի քանի րոպէ փորձէ մէկը այնտեղ կանգնել, ականատես կը լինի այդ ամենին։

Բանը նրանումն է, որ դեղը պատերազմի դաշտի համար այն նշանակութիւնն ունի, ինչ որ ջուրն ու հացը։ Ամեն կողմից աշխատում են որևէ կերպ օգնութիւն հասցնել պատերազմի դաշտում վիրաւորվածներին, հիւանդացածներին և պահեստիների անօք ու անտէրունչ ընտանիքներին, իսկ դեղատնային շտեմարանն ու դեղատները, ընդհակառակը, չը նայելով իրանցից սպասվող կարևոր օժանդակութեան, այդպէս են վարվում։ Շատ դատապարտելի է։ Արդեօք նշանակութիւն չունե՞ն նրանց համար կարգադրութիւնները։ Դրա վրա պէտք է աւելացնել նաև այն, որ «складъ»-ում պատուէրները չափազանց ուշ են կատարվում. իմ մի փոքրիկ պատուէրը մի շաբաթից հազիւ ստացայ։

Հ. Ժամկոչ

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզի ԱՐԱՄԵԱՆ Դպրոցի

համար հարկաւոր է արդէն փորձված գիմնազիաւարտ ՄԻ ՕՐԻՈՐԴ ռուսաց լեզուի համար, որ գիտնալու է նաև լաւ հայերէն. կարող են խնդիր տալ և Գայիանեանի կամ Յովնանեանի ընթացաւարտները, եթէ ունեն գիմնազիայի աւարտման վկայական։ Դասերի թիւը 20—24. ռոճիկ՝ 600 ր., ճանապարհածախս՝ 25 ր.։ Դիմել մինչև օգոստոսի 20-ը տեսուչ Ա. Տ.-Վարդանեանին։ Հասցէ՝ Делижанъ (Елисав. губ.), д. П. Григоряна. А. Т. Вартанянъ.

768. 2—1

Ղզլ-Արվատի հայոց եկ.-ծխ. միադասեան, միացեալ երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի փորձված

ՈՒՍՈՒՑԻՉ

(Ներսիսեանաւարտ), կամ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

(Յովհաննեանաւարտ), որը աւանդելու է բոլոր առարկաներից։ Ստանալու է տարեկան 500 ր. ռոճիկ, սենեակ, ծառայ և վառելիք։ Դիմել՝ Кизилъ-Арватъ. Попечителю Константину Юзбашанцу.

(օ. մ.) 766. 3—1

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

Թիֆլիսի Մանթաշեան Առևտրական Դպրոց

(Բէբուտօվսկայա, № 50)

Քննութիւնները օգոստոսի 25-ից ս. թ.։ Դպրոցն ունի այբուբենական բաժանմունք։

(հ. կ.) 746. 5—4

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան

սրանով յայտարարում է, որ օգոստոսի 15-ին Ուպրավայի շէնքում տեղի կունենայ ՆՈՒԱԶՈՒՐԴ (торги) կապալով տալու Գօլօվինսկի պր. վրա գտնվող Շիօյեան քաղաքային տան մէջ կաղնի տախտակից պարկէտային յատակ շինելու՝ ասֆալտի վրա, 170 քառ. սաժ. տարածութեամբ։ Նուազուրդին պիտի ներկայացնել պարկէտների նմուշները։ Յայտարարութիւնները, հանդերձ իւրաքանչիւր քառ. սաժէնի համար վճարվելիք գներով, փակ ծրարների մէջ պիտի ներկայացնել Քաղաքային Ուպրավայի Շինարարական Բաժանմունքը մինչև օգոստոսի 15-ի ցեր. ժամը 12-ը։ Յայտարարութիւններին կցված պիտի լինի քաղ. կասսա մտցված մատակարարական ընդհանուր գումարի 5% գրաւականի անդորրագիրը։ Կօնդիցիաները կարելի է ամեն օր տեսնել Շինարարական Բաժանմունքի Դիւանատանը առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը։

(կ. հ.) 753. 3—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ԱՌԱՋԻՆ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Ատեստատներ տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։

Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։

Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (ե.հ.կ.) 749. 0—5

ԱՐՇԱԿ ՉՕԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

կազմած

ԴԱՍԸՆԿԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Այբբենարան-Ընթերցարան. Վեցերորդ տիպ, բարեփոխված. . 40 կ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ . . . Հինգերորդ տիպ, բարեփոխված. . 50 կ.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . Չորրորդ տիպ, բարեփոխված. . 60 կ.
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . . 70 կ.

Ա. Բ. և Գ. տարիները ենթարկված են հիմնական փոփոխութեան. ճոխացված են ձեռագիր յօդուածներով, պատմելու, շարադրելու եւ նկարելու պատկերներով։

Դիմել «Գիր» գրավաճառանոցին. Երևան՝ «Արարատ» և Յովհաննիսեան գրախանութներին. կազմողներին՝ Երևան, Թեմական Դպրանոց։ (ե.հ.) 760. 6—2

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ., տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկական ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ (մօտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ. կ.) 551. 0—32

ԻՆԺԵՆԵՐ

Ի. Ս. ՊՕՆԴՕԵՎ

— ԹԻՖԼԻՍ —

Ելիզավետինսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.

— Տէլէֆոն գրասենեակի № 123. —

Ջրմուղի չուգունէ և ցինկի խողովակներ իր փասօնային մասերով։

ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ եւ ցինկով պատած)

ՑԷՄԷՆՏ, ասֆալտ, գուդրօն, կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մեխեր, ամեն չափի եւ այլ [illegible] համար։

Ծխնելոյզների համար աղիւս՝ Վակէում գործվող աղիւսի սեփական գործարանից։

(7, 14, 21, 28) 34. 32—22

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ. Лорисъ-Меликовская улица, домъ казенный